



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԲ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884



Կ. ՊՕԼԵՍ

1884

## ԴԻԻԱՆԻ ԱՋԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

### ՄԱՅԻ ԴԻԻԱՆ

Տիգրան	Էֆէնտի Եռնուֆեան	Ս. Արեւոյէր
Քրիստոսաուր	» Ղաղարոսեան	Բ. »
Յովհաննէս	» Թորոսեան	Գ. »
Յովհաննէս	» Արշակունի	Ս. Արեւոյէր
Յակոբ	» Պօշակեան	Բ. »
Ստեփան	» Տամատեան	Գ. »

#### Ձեռննաստրեան Գիւան

Մատթէոս Եսկ. Իլմիրլեան Արեւոյէր  
 Գարեգին Վրդ. Թաթարեան  
 Մարկոս Էֆէնտի Աղարէզեանց

#### Գաստիարակուրեան Գիւան

Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան Արեւոյէր  
 Գէորգ » Ապաուրլահ  
 Միքայէլ » Մամիկոնեան

#### Կալուածոց Գիւան

Քրիստոս Էֆ. Ղաղարոսեան Արեւոյէր  
 Յակոբ » Եմէնիճեան  
 Պօղոս » Թուրքոմեան

#### Համարակալուրեան Գիւան

Կարապետ Էֆ. Սըլվանեան Արեւոյէր  
 Մկրտիչ » Ճանըմեան  
 Գառնիկ » Յովակիմեան

#### Յարաբերութեան Գիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արեւոյէր  
 Ռուբէն » Պուլիուրեան  
 Վիշէն » Օրմանեան

#### Իրաստրեան Գիւան

Յովհաննէս Քճյ. Մկրեան  
 Յակոբ Էֆէնտի Արշակ  
 Գարրիէլ » Նորատունկեան

#### Նախանձեռնութեան Գիւան

Մինաս Էֆէնտի Չեւաղ Արեւոյէր  
 Յովհաննէս » Արշակունի  
 Նշան » Պօյանեան

#### Խմբագրութեան Գիւան

Հարբաճում Էֆէնտի Ալանանեան  
 Յակոբ » Գուրգէն  
 Կարապետ » Իւթիճեան

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԲ.

12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առժամայ).  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եռսուֆեան.

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական գործողութիւնք.
- Բ. — Խնդիր Երեսփոխանութեան Թ. Էֆ. Պէկեանի. (Շար. վիճաբանութեան)
- Գ. — Ընտրութիւն Ելմտից Յանձնախմբի Ազգային ժողովոյ.

Ատենապետ Էֆէնտի ատենը կը բանայ ժամ 3 1/2 ին, ի ներկայութեան 33 Երեսփոխանայ, որոց վերջին թիւն 61 ի կը յանդի:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻ

1.

Բացակայութիւնք

Երեսփոխաններէն՝

Տ. Գրիգոր Քահանայ Աճէսեան

Միհրան	Էֆէնտի	Պահճէգարուլեան
Կարապետ	»	Աղարամաճեան
Կարապետ	»	Սրէչեան

անձնական տիրութեան պատճառաւ ժողովոյ այս աւուր նիստէն բացակայ մնալին գրով հաղորդած լինելով Գիւանին, իբր օրինակ բացակայք՝ կարձանագրուին ի տուարի ներկայութեան :

2.

Վաներացունց 1882 ճառագրչանի ԻԱ. Է. ներկայ շրջանի ժ. ժԱ. նիստերու Ատենագրութեանց .

ԹԻԻԼՊԵՆՏՆԵԱՆ Ն. ԷՅ. — Օրինական զիտողութեան մը համար խօսք կուզեմ :

Յայտնի է թէ Ժողովս իւր վերջին նստին մէջ որոշեց երբեք չարաթէն 'ի նիստ զուսարիւլ, բայց կը տեսնեմք թէ մէկ շարաթ յետաճգուեցաւ այն . թէև մէկ շարաթն ինքնին նշանա- կութիւն մը չունի, բայց որովհետև բանիցս զիտողութիւնք հղած են Ժողովոյ որոշումներն ճշդիւ գործադրելու մասին, ուստի կը խնդրեմ որ Պատ. Դիւանն հաճի առ այս բացատրու- թիւն մը տալ :

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՖ. — Արդէն Դիւանն ինք- նին պիտի տայ այդ բացատրութիւնն, սակայն հարկ է նախ վաւերել նախորդ նիստերու ա- տենագրութիւնն և ապա անցնիլ այդ խնդրոյն :

ԶԱՅՆԵՐ — Շատ լաւ, շատ լաւ :

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՖ. — Երբեք նիստերու Ատե- նագրութիւնք կան սցսօր պատրաստ՝ Ժողովոյդ վաւերացման ենթարկելի, հետևաբար ըստ կարգի թուականի, նախ 1882 նստաշրջանի ԻՍ, նստինն կենթարկեմ Ժողովոյդ ընդունե- լութեան և կը հրաւիրեմ զերեւակոխանս յայտ- նել իւրեանց ղիտողութիւնքն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Նիստ ԻՍ, երես 336 սիւնակ Բ. յաֆեցա՝ բառն պիտի լինի յա- ֆեցա՝ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Թէև այդ նստին մէջ Ատենագրի պաշտօնն ես կը վարէի, բայց յետոյ Մայրաքաղաքէս հեռանալով խմբագրու- թեանն չեմ մասնակցած :

Արդ, հարկ է գիտնալ թէ՛ նոյն նստին մէջ, երբ Ս. Պատրիարք Հայրն՝ Լիաջօր Յանձ- նոժողովոյ մը կազմութեան առաջարկն ըրաւ, խօսք ուղեցի և չ'տրուեցաւ, բայց 'ի վերջոյ ըսի թէ՛ « Ես կը բողոքեմ Յանձնաժողովին Լիաջօրութեան դէմ » : Այս բողոքս արձանա- գրուած չէ՛ :

ՓՈՓՈՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ նստին մէջ երբ Սովետաց Յանձնաժողովոյն վրայ կը խօսուէր ըսի թէ՛ « Հայոց աղքն տուաւ այդ ստակն . և Սրբազան Պատրիարք Հայրն պատասխանեց, « կէսն միտոյն ». և ապա ես դուրս ելայ Ժող- վին : Բայց այժմ կը տեսնեմ թէ՛ Ս. Պատ- րիարք Հօր այդ յայտարարութիւնն տարբեր կերպով արձանագրուած է Ատենագրութեան մէջ :

Որինչ ղիտողութիւն չ'լինելով, Ատենա- պետ էֆէնտի Ժողովոյն վաւերացման կ'են- թարկէ ԻՍ, նստի ատենագրութիւնն որ կ'լն- ԴՈՒՆՈՒԻ միաձայնութեամբ :

Այս Ատենագրութեան էֆէնտի Ժողովոյ վաւե- րացման կը ներկայէ ներկայ շրջանի Ժ. նստի Ատենագրութիւնն :

ՓՈՓՈՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 234, Ա. սիւ- նակ, խօսքս պիտի ըլլայ սապէս : « Այս դի- « տողութիւններէս զատ ուրիշ ղիտողութիւն « մ'ալ ունիմ : Մէրեմ-Պուլի էֆէնտիին հետ « Մայր-Դիւանն բանակցութեան ղիրը նստըն- « թապ նստին մէջ չ'կարգացուցաւ . եթէ « կարգացուէր, անշուշտ այն ատեն պիտի « պարտաւորի իմ ղիտողութիւնն ընել . բայց « այժմ որ Ատենագրութեան մէջ հրատարակ- « ուած է, պարտ կը համարիմ ղիտել թէ, « այդ ղիրը Ժողովոյս Եւր նստի մէջ տրուած « որոշման ճշդիւ չ'պատասխաներ, և թէ այդ « գրոյն մէջ Ժողովոյս արժանապատուութեան « դէմ ակնարկութիւն կայ : Այսքան ղիտողու- « թիւն բաւ կը համարիմ, յայտարարելով թէ « Մէրեմ-Պուլի էֆէնտիի արժանիքը կը ճանչ- « նամ, որոյ ներկայութիւնը գոհունակութիւն « կը պատճառէ մեզ, անոր արժանապատու- « թիւնը վիրաւորելու միտում չունիմ, այլ կը « ցանկամ որ յարգուի Ժողովոյս որոշումը և « պահուի անոր արժանապատուութիւնը » :

Պորդէն էֆէնտի հարցոյց թէ՛ ո՞րն է

այդ արժանապատուութեան կէտը . պատասխանեցի՛ Ատենապետ էֆէնտիի գրոյն սա մասը ցուցնելով . « Որչափ իրաւացի պատճառներ « ալ ունեցած ըլլայիր Չեր հրաժարին , բար « ճուած պէտք էին համարուի նոքա այն նոր « ետանդին ու խոհականութեան շնորհիւ , որ « կը տիրէ այժմ Ժողովին մէջ : » Եւ աւելցուցի . « Ինչ որ ալ ըլլայ Ժողովիս մեծամաստ « նութեան որոշումը , թէ՛ անիրաւ և թէ՛ սը . « խալ , սակայն օրինաւոր է , քանի որ մեծա « մասնութեան բռնէն է այդ որոշման հեղի « ճանի , և ամենքս պարտաւոր ենք յարգել « Ժողովին որոշումը և նախանձանդիր լինել « անոր արժանապատուութեան : »

Մէլիբեան Միգրտիչ էֆէնտի ձայնակցեցաւ ինձ , և Ատենապետ Քրիստոստուր էֆէնտի յարեց իւր դիտողութիւնը , որ արձանագրուած է նոյն երես Բ. սիւնակի մէջ :

Այնուհետև սկսաւ աղմուկը , ոչ Ատենապետութեան ըսածին նման բազմաթիւ նստարաններէ , այլ վեց Երեսօրիականներէ , որք շարունակ կը պոռչտէին , և որոնց մի քանի խօսքերն արձանագրուած են և ոչ ամենքը : Բուն խնդրը թողած , Ատենապետ Եւսուֆեան էֆէնտիի գիրն Ատենապետութեան մէջ անցնելու որոշման վրայ կը պնդէին , մինչդեռ ես այդ մասին կը դիտէի թէ սղջպիսի որոշման յիշատակութիւնն է՛կայ Ատենապետութեան մէջ , Ամենէն վերջն Ատենապետի էֆէնտիին բարձրագոյն բողբոլը սկսաւ , որուն պատասխանել ինձ նմանապէս թոյլ չտուեցաւ . և դադարին ատենը հրաւիրեցի զինքը Գլանաղբարաց բով , կարգապուցի երկու նոթերն ալ , որպէս զի հասկնայ թէ , ես դիտողութիւն չունիմ թէ ինչո՞ւ Ատենապետութեան մէջ անցեր է Եւսուֆեան էֆէնտիի գիրը . այլ իմ դիտողութիւններս սուրիչ են , զորս նոթերն կապուցուցանէին թէ և խիստ կրճատամար . բայց կրցան գո՞ ընել Ատենապետի էֆէնտիին , գէթ նոյն սրահուն այնպէս թուեցաւ ինձ :

Ահա ատներ են իմ խօսքերս և դիտողու

թիւններս նոյն միջադէպին վրայ . կը մերժեմ Ատենապետութեան մէջ իմ բերանս դրուած սուրիչ խօսքերն , որոյ հակասութիւնն իսկ կը յայտնէ թէ , թերևս աղմուկին պատճառաւ լուսնէն արձանագրուած :

Երես 260 , սիւնակ Ա. խօսքիս վերջը պիտի աւելնայ . « Ազգային Ժողովիս յարգելու և անոր արժանապատուութիւնը պահպանելու մասին : — Սակայն ցուայի է որ Ալաբէգեան էֆէնտիի ատենաբանութիւնն այնքան թերի և կրճատեալ է ատենագրութեան մէջ , որոյ համար յայտնուած շնորհակալութիւններն աւելորդ կրնան դատուիլ :

Երես 272 , սիւնակ Ա. խօսքիս մէջ , այդպիսի սխալ մը սարգէր է , պիտի ըլլայ « Եթէ սխալ մը սարգէր է : — Յետոյ տեսայ թէ չարժեք ոչ զիտողութիւնն և ոչ պատասխանս :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՏ. — Թէ և ես այդ նստին Ատենապետն էի և ատենագրութիւնն ալ իմ ստորագրութիւնն կը կրէ , բայց պարտք կը համարիմ յայտարարել յ'ատենի Ժողովոյդ թէ՛ ես չեմ ստորագրած զայն , զի իմ դիտողութիւնքս նկատողութեան չեն առնուած , և թէ չ'իսն այդ ատենագրութեան մէջ ճշգրտութիւնը : Չոր օրինակ ըսուած է թէ՛ « Երեսօրիականը հետզհետէ մեկնեցան » մինչդեռ մեկնող Երեսօրիականայ թիւն հազիւ 4-5ի կը հասնէր : Ըսուած է թէ՛ « բազում նստարաններէ բողբոնք եղան » մինչդեռ այդ բողբոն մի բանի Երեսօրիականայ կողմանէ տեղի ունեցան և թէ՛ դադարէ ետքն եղած խօսքեր արձանագրուած են և ինչ : Իմ այս դիտողութիւնը բարձրած եմ նաև մեր Գլանապետի էֆէնտիին ևս , բայց Ատենապետի էֆէնտի կերևայ թէ բնաւ կարևորութիւն չէ տուած անոնց : Այս է ահա իմ ըսելիքս :

ԹՎԿԵԱՆ Ա. ԷՏ. — Այդ նստին մէջ երբ Չերտոյ էֆէնտի Առաջնորդական խնդրոյն վրայ խօսելով կըսեր թէ՛ Սա՛մանագրութեան հուկառակ է , ես ևս բնդմիջմամբ ըսի թէ՛ « Ոչ թէ 24 տարուան Սա՛մանագրութեան մը հուկառակ է , այլ Հայաստանեայ Եկեղեցոյ 1500 տարուան կանոնայ ղէմ է »

Խնդրեմ արձանագրել այն կէտն , վասն

դի կան ընդմիջումներ, որք ամբողջ ատենա-  
բանութիւն մը կարժեն :

ՄԵՐԵՆՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅՑ. — Կրտ ժ. երես  
261, սիւնակ Ա. իմ խօսքիս մէջ 'ի վերջըն-  
թեր տող, խորհրդարանական բառը՝ վարչա-  
կան ժողովականաց պէտք է լինի :

Նոյն երես, սիւնակ Բ. 'ի տող 13րդ քի  
ես իւր նարքման նամար բառերը պէտք է ամ-  
բողջմանն սապէս . քի էս իւր նարքման վրայ  
մասնաւորելով եւյն :

ԱՐԵՍՎՈՒՆԻ Յ. ԷՅՑ. — Պահ մը առաջ փա-  
փազեան էֆէնտի խր զիտողութեանց կարգին  
մէջ ինձ համար ես խօսելով ըսաւ թէ « Ատե-  
նադպիր էֆէնտին բարձրագոյ բողոքեց » : —  
Վը խնդրեմ որ յետ այսու Երեսփոխանք այդ  
տեսակի անականներ չ'գործածեն իմ կոկորդիս  
մեքենային նկատմամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Վը խնդրեմ Երեսփո-  
խան էֆէնտիններէն՝ որ ժողովէս զօրս ինչ  
կերտով որ կը շարժին միմեանց հետ, նոյն  
վարմունքն ունենան նաև ժողովարանիս մէջ,  
և աւելի իսկ յարգանք: Մեր վիճարանութեանց  
մէջ պարտիմք զգոյշ կալ այն տեսակ ակնար-  
կութիւններէ և բառերէ, որք կրնան անձնա-  
կանութիւններ վիրաւորել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ա. ԷՅՑ. — Ժողովէս զօրս Ե-  
րեսփոխանք բնաւ միմեանց դէմ անձնակա-  
րան մը չունին : Բայց հոս երբեմն այն տեսակ  
խնդիրներ կը ներկայանան, որք կրնան զմեզ  
սպա՛ մը յուղել և զբռնել . բնական է այս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Բայց Երեսփոխանու-  
թեան առաջին պայմաններէն մին է իրերն  
պաղ արեանք դատել, և զգուշանալ կրիւք  
խօսելէ, ինչպէս և չ'կրիւք գործելէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ա. ԷՅՑ. — Մեռեալ մորդեր  
չ'մբ . կարող չեմք անզգայ լինիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Ձեմ ուղեր ասիկ աս-  
ւերի ծանրանալ այս կէտիս վրայ :

ՁԱՅՆԵՐ — Բաւական է, բաւական :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Կախընթաց նստի Ա-  
տենագրութեան վրայ փափազեան էֆէնտի  
կողմանէ եղած զիտողութեանց մէջ, Դիւանիս  
կողմանէ աւ Մէրեմ-Գուլի էֆէնտի ուղղեալ  
պաշտօնագրին նկատմամբ ես յիշատակութիւնք  
կան: Թէ և էս նոյն նստին ներկայ չէի անձնա-  
կան տիտղոսութեան պատճառաւ, բայց ըստ ո-  
րում նոյն պաշտօնագրին զիտողութեանց տեղի  
տուած է աստ, ուստի հարկ կը համարվիմ յոչ-  
տարարել թէ՛ աւ Մէրեմ-Գուլի էֆէնտի ուղ-  
եալ նամակին խմբագրութեան մէջ չէ՛ մտած  
այն տեսակ գաղափար մը, որ ժողովոյս ար-  
ժանագրտութիւնն վիրաւորելու միտում մը  
ունենայ : Պէտք է զիտնալ թէ ժողովոյս որո-  
շումը որոշում է և թէ յիշատակեալ պարբե-  
րութիւնն, որ այժմ առարկութեանց տեղի  
կուտայ Երեսփոխանաց սմանց կողմանէ, բնաւ  
այդ որոշումը քննադատելու գոյն մը չ'կրեր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ա. ԷՅՑ. — « Այն նոր եռան-  
դին և խոհակնութեան շնորհիւ որ կը տիրէ  
այժմ ժողովոյս մէջ » ըսելն՝ կը նշանակէ թէ  
եղած է ժամանակ մը յ'որում ժողովն չէ  
ունեցած եռանդ և խոհակնութիւն : Ուստի  
Ձեր այդ յայտարարութիւն, Ատենապետ էֆ-  
գլխովին հակառակ է յ'անուն ժողովոյ ուղղեալ  
պաշտօնագրոյն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Բնաւ հակասական չէ՛:  
Դիւանս իւր այդ պարբերութեամբն ուղած է  
փակել առանց ո և իցէ քննութեան, նոյն իսկ  
Մէրեմ-Գուլի էֆէնտի կողմանէ նախապէս  
յարուցեալ և իբրև իւր հրածարականի շար-  
ժառիթն համարեալ միջադէպներն, առանց  
որոյ անհնար կըլլար համոզել զՄէրեմ-Գուլի  
էֆէնտի համակերպիլ ժողովոյս կրկին որոշ-



մանց , վերջապահներու համար իւր երեսփոխանական պաշտօնն առանց վերստին խնդիր ընելու անցեալ իրողութիւնները , զորս բնաշատելու իրաւունքն իրեն վերստահած էր :

( Աղմուկք )

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Պէտք է չ'եղեալ նկատել Դիւանիք կողմանէ՝ յ'անուն Ժողովոյ յղեալ գործն նոյն պարբերութիւնն , իբր վերաւորիչ՝ Ժողովոյ արժանապատուութեան :

ՍՐԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կը ցաւիմ որ Ատենապետ էֆէնտի իւր պաշտօնն աւելի խստութեամբ չուզեր 'ի գործ զնել :

Ձանաղան նստարաններէ ուրիշ Երեսփոխանք ևս կը ձայնակցին Սիւսեան էֆէնտի :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Առ Սրվաճեան ԷՖ.) Մի կարծէք Սրվաճեան էֆէնտի , որ Ձեր ներկայութեամբն է որ ետանդ ու խոհակնութիւն կը տիրէ Ժողովու մէջ :

(Վերստին աղմուկ կը տիրէ Ժողովին մէջ )

Ատենապետ էֆէնտի հանդարտեցնելով աղմուկն , կը յայտարարէ թէ բաւական կը համարի այն միջանկեալ պարագայիս վրայ 'ի Դիւանէ եղած յայտարարութիւնն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քուէի զրէք Ձեր այդ յայտարարութիւնն , Ատենապետ էֆէնտի :

ՋԱՅՆԵՐ — Բաւական է ու , հարկ չ'կայ բուհարկութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բնու այն օրինակ բացարձակ մը քուէի չ'ըլտիր : Վ, ամս զի ծոշովոյ համար հարկ եղածն , միայն լսել էր թէ Դիւանն երբէք զիտու չէ ունեցած Ժողովոյ

որոշումները բնագրասել և անոր արժանապատուութիւնն վերաւորել , այլ ընդհակառակն զայն յարկել ապու նտխանծովորութեամբ վարուած է :

ՋԱՅՆԵՐ — Այո՛ , այնպէս է , բաւական է 'ի Դիւանէ եղած քայտարութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գալով Ղաղարտեան էֆէնտի կողմանէ յարուցեալ խնդրոյն՝ թէ ինքն իբրև Ատենապետ նոյն նստի՝ չէ ուղած ստորագրել այդ ատենագրութիւնն , կը լուծեամ յայտնել թէ նոյն նստին Ժողովոյ Դիւանադպիրն հիւստնք լինելով , ինքն անձամբ չէ կրցած տանիլ ձեռագրերն Ղաղարտեան էֆէնտի , հետեւաբար յանձնարարած Տարագրչին , որ յառաջ քան զտարագրութիւն զայնս ցոյց տայ Քրիստոստուր էֆէնտի , որ մինչ ԱՅրդ թերթն նայած և հարկ եղած սքրբարագրութիւններն ըրեր է , իսկ անոնց յարակից եղող միւս թերթերն սրբագրելու միջոցն տեսնելով որ միջազգայի մը պատահմամբ իւր կողմանէ եղած ղիտաղութիւնն Ատենադպիր էֆէնտի չ'է ընդուներ , ինքն ալ վշտայեր և չէ ուզեր մնացեալ թերթերն ևս սչքէ անցնել և ստորագրել :

Այս է ահա ինքիւն , որ իբր ցաւալի միջադէպ մը՝ պէտք է փակեալ նկատել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Պէտք է զիտնալ Ատենապետ էֆէնտի , որ նոյն նստի ատենագրութեան վրայ իմ կողմանէս եղած ղիտաղութիւնը նկատողութեան չառնուեցան Ատենադպիր էֆէնտի կողմանէ , և հետեւաբար չը յարդուեցաւ Ատենապետութեան արժանապատուութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ Ժամանակ Ատենապետ և Ատենադպիր մէջ կրնան այն օրինակ անհամաձայնութիւնք պատահիլ :

Այն ցաւալի միջազգայն բնու տեղի չտիրուեալն , թէ է Քրիստոստուր էֆէնտի փո

խանակ վշտանալու, տեսակցեր Ատենադպիր էֆէնտիի հետ, և հարկ եղած բացատրութիւններն արուելով, անշուշտ համաձայնութիւն պիտի գոյանար :

Աւտի թիւրիմացութեան մը արդիւնք պէտք է նկատել սոյն ղէպը և ոչ թէ իւր Ատենապետութիւնն անօրոտուելու դիտում մը նշմարել ուզել :

Արդ սոյն միջադէպն ալ փակեալ համարելով ժողովոյ ընդունելութեան կենթարկեմ ժող նստի ատենագրութիւնն :

Ատենապետ էֆ. ի սոյն բացատրութեան վրայ, ժողովն կը վաւերէ ժ. նստի Ատենագրութիւնն :

Նոյնպէս Ատենապետ էֆէնտի 'ի դիտողութիւն կը հրաւիրէ ղերեպտիտանս ժԱ. րդ նստի ատենագրութեան վրայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Նիստ ժԱ. երես 295 սիւնակ Բ. « ասիկց վերջն այլևս չպիտի խօսիմ » խօսք պիտի ըլլայ « այսուհետև խօսք չունիմ » և ըն :

ՄԵՐԵՆՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՅ. — Նիստ ժԱ. երես 299, սիւնակ Ա. իմ խօսքիս մէջ 'ի տող 22րդ կը լուսին բառը պիտի լինի կը լուսին : Նոյն երես սիւնակ Բ. 'ի տող Գ. րդ ընտրիլն բառը պէտք է լինի ընտրեալն :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՅ. — Երես 205 սիւնակ Բ. Պէկեան էֆէնտիի նամակին առթիւ ըսուած է թէ՛ « ժողովն Ձ ղէմ միաձայնութեամբ որոշեց նկատողութեան չ'առնուլ զայն և ըն » որ սխալ է. զի ժողովն որոշեց չ'եղեալ նկատել նոյն գիրն և ոչ թէ նկատողութեան ըսուուլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ձեր այդ դիտողութիւնն սխալ է, Սուրենեան էֆէնտի, վասն զի ներկայացեալ գիր մը չ'եղեալ կարենալ նկատուելու համար հարկ է որ հեղինակն զայն յետս կողէ, ինչպէս Պէկեան էֆէնտի սոյն գրով ըրած է իւր նստորդ յանձնաագրոյն

նկատմամբ : Աւտի ընական է թէ՛ ժողովոյս ալ որոշումն ուրիշ բան չ'ը կրնար լինիլ եթէ ոչ առանց նկատողութեան առնլու այդ գիրն բուն խնդիրն վիճարանութեան ենթարկել :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՅ. — Երես 304 սիւնակ Ա. Չօպանեան էֆէնտիի գործածած ոճիր բառին ղէմ բողբած եմ և ինքն ալ յետս կողած է զայն : Բայց այդ յետս կողում չ'է արձանագրուած և միայն աննշան բառն արձանագրուած է :

Երես 203 սիւնակ Ա. ըսած եմ թէ « ինչպէս նաև ասիկց առաջ ալ Գուսգարուի թաղէն ընտրուած և իւր վաւերացումը հոս խընդիր եղած է և ըն » որպէս 'ի պատասխանի՛ Չօպանեան էֆէնտի ևս ըսած ըլլայ թէ՛ Գուսգարուի Ընտրողական ժողովն չ'է վաւերացուցած է այդ ընտրութիւնն, բայց ըստ որում վաւերացուած է Ընտրողական ժողովէն. ըսել է թէ՛ Չօպանեան էֆէնտի կամ քնաւ ըսած չ'է այդ տեսակ խօսք մը և կամ սխալ ըսած է :

Գարձեալ էջ 307 սիւնակ Ա. ընդմիջելով ղԶերազ էֆէնտիին ըսի. « քանի որ Թաղերն հետզհետէ չեն ուղեր համակերպիլ » և ոչ թէ՛ « քանի որ թաղ մը չուզեր համակերպիլ » և ըն :

Կը խնդրեմ որ այս դիտողութիւնքս արձանագրուին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Նիստ ժԱ. երես 293. Բ. սիւնակի 18րդ տողն պէտք է ըլլայ սապէս « բայց սոյնքան արարողին փորձերն խրատ չեղան » :

Երես 297, սիւնակ Ա. տող 24 « ուրախ առիթ մ'է » պէտք է ըլլայ « ուրախառիթ է » :

Երես 298, սիւնակ Ա. 9րդ տող պէտք է ըսել « քայց ո՞ր առաջնորդ իւր վիճակին վրայ յ'կեանս պաշտօն վարած է այժմ » : իմ խօսքիս մէջ այժմ բառն ստացուած է նշանակել :

Ուրիշ դիտողութիւն չ'լինելով, Ատենապետ էֆէնտի ժողովոյն ընդունելութեան կենթարկէ ժԱ. նստի ատենագրութիւն որ կը ՎԱԻԻԲԻ՛ հանդերձ դիտողութեամբ :

Յետ վաւերացման Ատենադրութեանց Ատենապետ Էֆէնտի խօսք կուտայ Մէրէէմ — Գուլի Էֆէնտիի, որ ատենադրութեանց վրայ ընդհանուր զիտողութիւն մ'ընելու համար ուզած էր :

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կը տեսնեմ որ ատենադրութեանց վրայ զիտողութեան պահուն Երեսփոխանք ոմանք այլոց խօսքերն ալ սրբադերու և ժողովոյն մէջ տեղի ունեցած անցից վերաբերեալ նկարագիրներն ալ փոփոխելու կ'ենեն և հետևարար տեսակ մը խօսակցութիւն կը բացուի Երեսփոխանաց մէջ, և երբեմն այնպիսի ակնարկութիւնք և զիտողութիւնք ալ կը լինին որ զիրազգածութեանց կըղպչին և ուրիշներն ալ կը պարտուորին խօսք առնուլ : Ինչպէս ինձ ալ պատահեցաւ պահ մը առաջ Փարիսիական Էֆէնտիի զիտողութեան տոթիւ և պարտաւորեցայ խօսք ուղել, բայց ժողովն չ'ուզելով խօսք երկարել և վիճարանութեան գոյն տալ, խօսք չ'որոյնք տալ ինձ, և ես համակերպեցայ օրինաց տրամադրութեան, ինչպէս որ սրբաքս էր : Ինձ կը թուի թէ այս վիճակ ծագում կ'առնու Մայր-Դիւանիւք, առ ՚ի յարգանս Երեսփոխանութեան անշուշտ, թղլտուութիւն ընելէն որպէս զի երեսփոխանք ուղղեն իրարու ըսածները : Բայց որպէս զի իսկ մ'անպէտ խօսքերու և ասպարդիւն ժամափաճառութեան տեղի չ'տրուի, ես կը փափարիմ որ երբ երեսփոխանաց զիտողութիւնք օրիշ երեսփոխանաց խօսքերուն և անցից նկարագիրներուն վրայ ես տարածին, Դիւանն այդ զիտողութեանց սխալ և ուղիղ լինիլն երևան հանելու համար՝ իրօքանակ ընդգիմախօսից վկայութեանց զիմելու, և թողելու որ երեսփոխանք զիրար համադրեն, ուղղակի ինքն տէր կենաց այդ զիտողութեանց պատասխանելու համար և իւր յուշագրերուն վրայ յենելով հերքէ կամ հաստատէ եղած զիտողութիւնն, առանց որոյ վիճարանութիւնք կրնան յանձնուի երկարիլ, և զրանազանան պատեհուութեանց ծնունդ տալ :

ԱՅՏԵՍԱՊԵՏ ԷՖ. — Արդէն Դիւանն ալ

ճիշդ Մէրէէմ-Գուլի Էֆէնտիի կողմանէ եղած զիտողութեանց համաձայն շարժած է, բայց երբ մի բիչ եւս առաջ երթայ, յայնժամ այնպէս պիտի ենթադրուի թէ՛ Դիւանն կ'ուզէ միջամտել :

3.

Բացատրութիւն ՚ի Մայր-Դիւանէ Ժողովոյ Ելաւն մէկ շաբաթ յետաձգուած լինելուն առթիւ.

ԱՅՏԵՍԱՊԵՏ ԷՖ. — Որպէս զիտէք, ժողովք իւր վերջի նստին մէջ ըստ առաջարկութեան Դիւանիս, որոշած էր երեք շաբաթէն գումարել, զի հաւանականութիւն կար թէ այդ ժամանակամիջոցի մէջ երուսաղիմաց պարտոց խնդիրն պիտի կրնար գուց հոս : Սակայն ՚ի վերջոյ Քաղաքական Ժողովոյ Աւետ-Ատենապետ Պէյի հետ տեսակցելով տեղեկացայ որ առ այս տասն և հինգ օր ևս սպասել հարկ պիտի ըլլայ, և որպէսզի մի գուցէ այս խնդրոց համար մէկ շաբաթ յետոյ ժողովք վերստին ՚ի նկատ գումարել հարկ լինի, յարմար գատեցինք մեր սովորական գումարումն մէկ շաբաթ յետաձգել, մանաւանդ թէ՛ մեր օրակարգին մէջ այնքան կենսական խնդիրներ ալ չ'կային :

Ահա այս է ժողովոյ նիստն մէկ շաբաթ յետաձգուած լինելուն պատճառն : Իսկ եթէ առարկուի թէ՛ ինչո՞ւ ուրեմն այսօր այդ լընդիլին չ'ներկայանար, կը պատասխանեմ թէ՛ երուսաղիմաց Ս. Պատրիարք Հայրն ներկայ եօթնեկու մէջ հրատիրուեցաւ բանակցիլ ընդ Բ. Դրան և բնականաբար Դիւանն չ'էր կրնար այդ պատճառաւ ժողովոյ նիստն այս շաբաթ եւս յետաձգել :

ՅԷԼԷԿԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ Ազգային ժողովն միմիայն երուսաղիմաց խնդրոյն համար գումարուի որոշած ըլլար, տրուած բացատրութիւնն կրնար արդարացի նկատուիլ, բայց ըստ

որում մեր սեղանին վերայ ունիմք երուսազիւ-  
մայ խնդրէն ոչ նուազ կենսական խնդիրներ  
եւս, աւստի այդ յետաձգումն ըստ ինքեան ա-  
ւերորդ էր :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Էսպէս համարուած  
եմ թէ՛ այդ մէկ շարաթի յետաձգումը յառ-  
կապէս երուսազիւմայ խնդրոյն առթիւ եղած  
ըլլայ, ուստի այս տեսութեամբ իրաւացի կը  
գտնեմ Գիւանին կողմանէ արուած բացատրու-  
թիւնն : Բայց որովհետեւ կըսուի նաեւ թէ՛  
Օրսկարգը մէջ կենսական կարեւորութիւն ու-  
նեցող խնդիրներ չ'կային, առ այս խոնարհա-  
բար կուգամ գիտել տալ թէ՛ ասիէ յառաջ  
կարեւորութիւն ունեցող նիւտեր եւս յետա-  
ձգուած են, ինչպէս որ պատահեցաւ Կոթո-  
ղիկոսական խնդրոյն առթիւ և Ժողովս իւր միա-  
համուռ քուէսին դատաւարտեց այդ յետա-  
ձրգման հեղինակներն :

Արդ, եթէ կարեւոր և թէ անկարեւոր  
խնդիրներու համար միանգամայն Ժողովոյս նիւ-  
տերն Գիւանայ կողմէ այսպէս յետաձգումին,  
չեմ գիտեր թէ ի՞նչպէս կարելի պիտի լինի  
գտնել միջին ճանապարհը :

Ուստի կը խնդրեմ որ յետ այսու, առանց  
Ժողովոյս որոշման՝ այն օրինակ յետաձգումներ  
տեղի չունենան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւանս կը մերթէ Տէ-  
լէկեան և Գուրգէն էֆէնտիներու դիտողու-  
թիւնքն միանգամայն : Արդարև Ժողովն ինքն  
կորոշէ իւր նիւտերու գումարման օրն և ժա-  
մը, և ոչ որ իրաւունք ունի զայն փոխելու :  
Ստիպոյն կրնան պատահիլ այնպիսի պարագա-  
ներ, յորում Գիւանը կամ Ատենապետը ա-  
ռանձինն զայն յետաձգելու առիպոյն, առ  
այս 'ի հարկէ պատասխանատու մնալով Ժո-  
ղովին, որ արուած բացատրութենէն եթէ գո՛հ  
մնայ, խնդիրն ինքնին փակեալ կը նկատուի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այսուհետեւ այն

օրինակ յետաձգումներ տեղի չունենան ըսե-  
լէն, չի հետևիր թէ՛ բացառիկ պարագայից  
մէջ, Գիւանն պատասխանատուութիւն ստան-  
ձնելով չի կրնար յետաձգել նիւտն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն 'ի բայ Թողով  
նախորդ Գիւանայ կամ՝ ապագային մէջ պա-  
տահելիք դէպքերն, այն նախն յետաձգման  
համար պահ մը առաջ տուած բացատրութիւնս  
Ժողովոյց քուէին կենթարկեմ :

( Ժողովականք մեծամասնութեամբ գոհա-  
ցուցիչ գտնելով Ատենապետ էֆէնտիի յայ-  
տարարութիւնը, այն միջադէպը կը փակ-  
ուի : )

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քանի որ երուսա-  
զիւմայ պարտուց փայ խօսք կըլլայ, պարտք  
կը համարիմ յ'անուն այս Ժողովէս կարգեալ  
Յանձնաժողովայ յայտարարել թէ, ինքն ըստ  
որոշման Ժողովոյց՝ դիմուորական արոց յաւել-  
ման խնդրոյն առթիւ միայն երկու անգամ 'ի  
նիւտ հրատարուած է Վարչութեան հետ խոր-  
հրդակցելու և չկրցաւ համաձայնութեան մը  
յանգիլ . և ըստ որում Վարչութիւնն մեր  
անհամաձայնութիւնը Ս. Երուսազէմի պարտուց  
հետզհետէ բարձման պատճառ կը նկատէր,  
Յանձնաժողովս պատասխանատու չմնալու հա-  
մար, մեծամասնութեամբ որոշած է ձեռնպահ  
մնալ :

Փափաղեան Ս. էֆէնտիի այն յայտարա-  
րութենէն յետոյ, Ատենապետ էֆէնտի կանց-  
նի առեւտական միա թղթոց :

4.

Տեղեկագիր ֆաղաբական Ժողովոյ 'ի պա-  
տասխանի երէր երեսփոխանաց հարցման, յա-  
ղագս Պեղզեան Ամիրալի կտակի բռնաբարման

Ատենապետ էֆէնտի յայտնելով թէ Պէղ-  
ձեան Ամիրալի մէկ կտակին բռնաբարման առ-

Թիւ ասկից առաջ երբեք երեսփոխանաց կողմանէ առ Վարչութիւն տղղեալ հարցման պատասխանողիւրն Գրասխն ասանդուած է հանդերձ Տնտես. Խորհրդոյ մէկ պաշտօնագրովն, կը հրատիրէ զԱտենադպիր Էֆէնտի ընթեռնուղոյնս :

**Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի Ազգային Երեսփոխանական Ժողովոյ**

Ասկէ առաջ յատենի Պատկառելի Ժողովոյդ երեք Երեսփոխանաց կողմէ հարցում մ'ուղղուելով՝ տեղեկութիւն խնդրուած էր թէ՛ ստոյգ է որ Մայր Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդն բռնաբարեր է բարեյիշատակ Պէղճեան Ամիրայի Գում — Գարուի դրսի վարժարանին ըրած մէկ կտակն, և սոյն հարցումն Գաղաքական Ժողովոյ հաղորդուած էր 'ի տեղեկագրութիւն : Ժողովն Ազգային Վարչութեան Տնտեսական Խորհրդոյ յանձնարարած լինելով այս մասին տեղեկութիւն տալ և լուսաբանել խնդիրն, Տնտես. Խորհուրդն մատոյց այս անգամ իւր տեղեկագիրն, զոր Գաղ. Ժողովը կը փութայ աւաստիկ հաղորդել Պատկառելի Ժողովոյդ 'ի պատասխան նոյն հարցման :

**Միամբ յարգանքք**

Ի յիմաց Ազգ. Վարչ. Գաղ. Ժողովոյ

Վ. Ատենադպրի            Վ. Ատենապետի

Կ. Հազարեան            Գ. Գրքնձեան

15 Սեպտեմբեր 1884

Կ. Պոլիս

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր Նախագահ Ազգային Գաղ. Ժողովոյ.

Պատկառելի Ժողովդ առ 'ի բացաւրըութիւն Խորհրդոյս յանձնարարած էր

Ազգային Երեսփոխաններէն Յ. Գուրգէն՝ Յ. Պէկեան և Մ. Ալիքսանեան Մեծ. Էֆէնտիներու կողմէ ստորագրեալ անցեալ Դեկտեմբեր ամսոյ 23 թուականաւ մի գրութիւն, որով կը հարցուէր թէ՛ ստոյգ է որ Մայր Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդն բռնաբարեր է այն կտակ, զոր ըրած է բարեյիշատակ Պէղճեան Ամիրայ, յանուն Գում — Գարուի դրսի վարժարանին :

Խորհուրդս 'ի քնին առնելով խնդիրը՝ վերահասու եղաւ որ բարեյիշատակ Ամիրային մէկ կտակին համաձայն Մայր Եկեղեցւոյ սնտուկէն Գում — Գարուի դրսի վարժարանին յատկացեալ հազարական զուրուշ ամսականէն քանի մը տարիներէ 'ի վեր 250 զուրուշը կը վճարուի Նարլը-Գարուի ազգային վարժարանին ըստ հետևեալ կարգադրութեան :

Բարեյիշատակ Գալիամանեան Յարութիւն Էֆէնտի 'ի կենդանութեան իւրում 125 ոսկի կը թողու Գում — Գարուի դրսի Եկեղեցւոյ սնտուկն, կտակելով որ անոր տոկոսն 125 զրշ. ի քանակութեամբ ամիս առ ամիս վճարուի անխափան Նարլը-Գարուի վարժարանին : Վախճանելոյն այս կամբը բաւական ժամանակ 'ի գործ գրուելէ յետոյ՝ Նարլը-Գարուի Թաղական Խորհուրդը ձայն կը բառնայ թէ, վախճանելոյն կամաց հակառակ կը տակեալ տոկոսները չվճարուի որինաւորապէս, և աւելի քան 9000 զրշ. ի պահանջը մը ունի սոյն հաշուէն, և թէ վարժարանն ուրիշ եկամտի աղբիւր չունենալուն՝ այս պատճառաւ վստիման վիճակին հասած է, 1880 թուականի Տընտեսական Խորհուրդն քննելով խնդիրն և երկու Թաղական Խորհրդոց բացաւրու-

Թիւնները լսելով՝ արդարայի կը գտնէ նարը-Գափուի Թաղական Խորհրդոյ արբտունջն, նկատելով սակայն որ Գումգափուի դրսի եկեղեցւոյ սնտուկը չլիտի կարենայ գիգեալ տոկոսեաց գումարը գէթ քանի մը վճարմամբ հատուցանել, երկուց Թաղական Խորհրդոց համահաճութեամբ կ'որոշէ որ Գումգափուի դրսի եկեղեցւոյ սնտուկն 125 զրշ. բանելիք տոկոսեաց և 125 զրշ. գիգեալ տոկոսեաց համար, ընդ ամենն 250 զրշ. վրճարէ ամեն ամիս նարը-Գափուի վարժարանին : Սոյն որոշումն ժամանակին նաև դրաւորապէս երկուց կողմանց հաղորդուելով Գումգափուի դրսի Թաղ-Խորհուրդն Մայր եկեղեցւոյ սնտուկէն ստացած 1000 զրշ. ամսականէն 250 զրշ. կը վերապահէ սոյն վճարման, առ ամիս միայն 750 զրշ. և ընկալագիր ներկայացնելով Մայր եկեղեցւոյ Թաղին, և երեք տարիներ շարունակ, մինչև ց'այս վայրկեան, 250 զրշ. և վճարումները սոյն եղանակաւ կատարելով հանդերձ, վերջերս թէ առ Խորհուրդս ուղղեալ գրութեամբ և թէ 'ի լրագիրս հրատարակութեամբ յիշեալ 250 զրշ.ին վճարման պատճառաւ Պէղճեան Ամիրայի կրտակն բռնաբարեալ կը նկատէ և տեղի կուտայ երեք երեսփոխան էֆէնտիներու վերոյշանակեալ հարցման :

Արդ, ինչպէս կը տեսնուի, կտակն բռնաբարութեան մէջ չէ, և Մայր եկեղեցւոյ Թաղական Խորհուրդն ըստ ամենայնի չարժած է Պատրիարքարանի որոշմանց համաձայն, իսկ վճարումներն ամեն ամիս անխափան կատարած է նոյն իսկ բողոքող Գումգափուի դրսի Թաղ-Խորհրդոյ կողմէ իրեն ներկայացեալ ըս-

տացազրոց քանակութեամբ, այլ ընդհակառակն սոյն կարգադրութեամբ վերկուած է այն կտակ, զոր Գումգափուի դրսի Թաղ-Խորհուրդն զանց ըրած էր դրոժագրել, հակառակ կամաց Գափամաճեան էֆէնտիի և 'ի փաս նարըգափուի աղքատ վարժարանին :

Քաջայոյս լինելով որ սոյն բացատրութիւնը բաւական կը համարուին Պատկ. Ժողովոյդ կողմէ, ներմիակեալ կը վերագարձնեմք յիշեալ հարցագրին :

Մնամբ խորին յարգանօք  
 և Դիմաց Տնտես. Խորհրդոյ  
 Ատենադպիր Վ. Ատենադետի  
 Մ. Չօպանեան Թ. Եմեմիճեան  
 11 Սեպտ. 1884  
 Կ. Պօլիս

( Յէր ըմբերօն )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Լսեցիր սոյն տեղեկողորերն : Ուտի նախ կը հարցնեմ հարցման տեղ երեսփոխանաց թէ՛ գոհ մնացի՞ն արդեօք Վարչութեան բացատրութենէն :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅԹ. — ( Իբր մարցման տեղ ) Ես իմ մասիս գոհացուցիչ կը գտնեմ այդ բացատրութիւնն :

ՊԷԿԵԱՆ ԵՒ ԱԼԻՔՍԱՆԵԱՆ ԷՅՅԹ. ( Հարցման տեղ ) Նոյնպէս և մենք գոհացուցիչ կը գտնեմք :

Տ. Վ. ՎՐԻ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ. — Թէև հարցման հեղինակներն գոհացուցիչ գտան արևուտ տեղեկութիւնքն, սակայն ես իբր երեսփոխան՝ անբաւական գտնելով զոյնս, կ'առաջարկեմ խնդրոյ կարգն անցնել այդ գրերն :

Տ. Ե. ՎՐԴ. ԱՅՎԱԶԵԱՆ : — Կր ձայնակ-  
ցիմ Տէր Վաճան Վարդապետի , զի տրուած  
այդ բացատրութեամբ խնդիրն ըստ բառակա-  
նին ըստարձնուած չ'իրնար նկատուի :

Սոյն երկու երեսօրհանն Հարց կողմանէ  
եղած զխտորութեանց վրայ , Ժողովն ԿՈՐՈՇԷ  
'ի խնդրոց կարգ անցնել այն տեղեկագիրն :

Յ.

Ժամօրագիր Կրօնական Ժողովոյ Հաճնոյ մեզ  
տեղի ունեցած բռնի ամուսնութեան մ'առօրի  
ի պատախաճի Կարապետ Էֆենտի Սվանը-  
եանի հարցման .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյս վերջնութե-  
ր նստին մէջ մեր պաշտօնակիցներէն Սվաճեան  
Կարապետ Էֆէնտի կողմանէ Հաճնոյ մէջ տե-  
ղի ունեցած բռնի ամուսնութեան մը խնդրոցն  
առթիւ առ Կրօնական Ժողովն հարցում եղած  
լինելով , տեղեկագիրն այսօր աւանդուած է  
Կրանիս հանդերձ Կրօն. Ժողովն առ Կիւրիկոյ  
Տ. Մկրտիչ Կաթողիկոս ուղղեալ պաշտօնագրին  
պատճէնօք և փոխանակեալ բաղմամբիւ հեռա-  
գրովք :

Ահաւասակ Կրօնական Ժողովոյ ծանօթ աղբիւրն :

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի

Աղբային Պատկառելի Ժողովոյ

Աղբային Պատկառելի Ժողովոյդ Ժ.  
նստին մէջ Աղբային Վարչութեան հե-  
տեւեալ հարցումն եղած է , թէ՛ « ի՞նչ  
միջոցներ ձեռք առնուած են Հաճընի  
մէջ 'ի դորձ դրուած բռնի ամուսնու-  
թեան համար » :

Կրօնական Ժողովն իւր ի՛նչ. նստին  
մէջ որոշեց ամփոփել առ ինքն ուղղեալ  
պաշտօնական բոլոր հեռագրերն միան .

դամայն և իւր պատասխանիքն և այն  
պաշտօնագիրն , զոր պատշաճ դատած  
էր ուղղել առ Ամենապատիւ Տ. Մկրտիչ  
Ս. Կաթողիկոսն Կիւրիկոյ :

Կրօնական Ժողովն կը հարորդէ սոյն  
պաշտօնական դորձողութեանց հաւա-  
քածոյքը Աղբ. Պատկառելի Ժողովոյդ 'ի  
գիտութիւն :

Մնամք խորին յարգանօք

Ի դիմաց Կրօն. Ժող. Աղբ. Վարչութեան

Ատենապետ Բ. Ատենապետ

Վ. Վրդ. Տ. Միխասեան Ս. Եպիս. Սեֆերեան

Տ Հոկտեմբեր 1884

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրանս աւելորդ կը  
նկատէ ընթեանու նաև փոխանակեալ հեռա-  
գրերը որոց մեծագոյն մասն հրատարակեալ  
են 'ի լրագիրս , և կ'առաջարկէ միմիայն առ  
Տ. Մկրտիչ Կաթողիկոսն ուղղեալ պաշտօնա-  
գիրն կարդալ առ :

Տ. Խ. ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ . — Կառա-  
ջարկեմ ընթեանու ներկայացեալ բոլոր զը-  
րերն :

ՄԷՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. -- Բաց կողա-  
չեմ , նախապէս հասկնամք թէ ի՞նչ է պատ-  
ճանն որ Կրօնական Ժողովն փոխտնոյ իւր  
պաշտօնագրին մէջ պարզ կերպով ամփոփելու  
տալիք պատտօնատնին իմաստն փոխանակեալ  
թղթակցութեանց հաւաքածոյն կը ընդ մեզ ,  
և իւր պաշտօնագրով զանոնք միայն կը ծանու-  
ցանէ : Անտարակոյ նպատակի մը համար է  
այսպէս վարուիլն , և այժմ է զանէ այդ կը  
պատակ բացատրուի մեզ , որպէս զի տեսնեմք  
թէ՛ հարկ կ'այդ թղթակցութիւնն ամբողջ  
լսելու և մեր տեսնազրութեան մէջ տղեւու :  
Այս տեսութիւնը կ'ընեմ մասնաւորաբար  
առ տեսակետով թէ՛ երբ Վարչութիւնը զըժ-

ուարի մի օր առ ինքն ուղղեալ հարցման պա-  
տասխանելու, և խնդրոյ նիւթ եղած խնդիրն  
բաղմամբ իւր թղթակցութեանց և պաշտօնագրոց  
ստուար ծրար մ'ունենայ, մենք նախընթաց  
օրինակ մը տուած կ'ըլլամք իրեն բերել՝ ա-  
ռանց խնդիրը լուսարանող պատասխանագրոյ՝  
մեր առջեւ թափելու այդ թղթերն և հրախ-  
րելու զմեզ որ նիստեր դո՛ւնեմք ծայրէ 'ի ծայր  
կարգալով խնդիրն հասնիլու համար: Ուրիշ  
բան է որ ժողովն պատասխանագիրը կարգու-  
լէ յետոյ ինքն ուզէ տեսնել նաև խնդրոյն վե-  
րաբերեալ թղթերն:

**ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՃ.** — Այդ գրերն  
պէտք է վերադարձնել Վարչութեան, որպէս  
զի հանդերձ իւր եզրակացութեամբ վերատին  
մեղ ներկայէ:

**ԹԻԼԻՊԷՆՏՅԱՆ Ն. ԷՃ.** — Շատ իրա-  
ւացի կը գտնեմ Միտեմ՝ Գուրի էֆէնտիի զի-  
տողութիւնն: Վասն զի կը տեսնեմ թէ՛ Վար-  
չութեանց՝ իրր որոշ պատասխան՝ փոխանակ  
բացատրութիւն տալու, թղթերու հաւաքածոյ  
մը բերել նոր բան չ'է:

Ասիկց յառաջ երբ ես ալ էլ միածնայ մէջ  
տեղի ունեցած ինչ ինչ զեղծմանց մասին հար-  
ցում ուղղեցի առ Վարչութիւն, նա փոխանակ  
իմ հարցմանց ուղղակի պատասխանելու, ըստ-  
ուարամբ իւր թղթակցութեանց հաւաքածոյ մը  
բերաւ հոս, որ ց'արդ կը մնայ մեր խնդրոց  
կարգի տունարին մէջ:

Ազգային ժողովս այդ տեսակ յարաբերա-  
կան խնդրոց քննութեամբ զրազելու պաշտօն  
և պարտականութիւն չունի: Ո և է խնդիր իւր  
կատարեալ վիճակին մէջ պէտք է որ ներկա-  
յանայ իրեն և ինքն անոնց եզրակացութիւնքն  
միայն բննելով իւր վճիռն կուտայ:

**ՁԱՅՆԵՐ** — Այս, պէտք է նախ բացատրու.  
թիւնն ընել:

**ԱՍԵՆԱՊԵՏ ԷՃ.** — Գտնի որ երեսփոխանք  
կը փոխարին առ Տ. Մկրտիչ Կաթողիկոսն ուղ-  
ղեալ պաշտօնագրոյն ընթերցումն յառաջ,  
ըստ օրինի լսել Կրօնական ժողովոյ Ատենա-  
պետ Արքազանի բացատրութիւնք, ուստի կը  
հրաւիրեմ զՆորին Գերապատուութիւն առ այս  
խօսք աւանդ:

**Տ. Խ. ԱՐՔԵՊՈՍ. ՆԱՐ-ՊԷՏ** — (Ատենագլխո  
Կրօնական ժողովոյ) Երբ այս հարցումը ուղ-  
ղուեցաւ մեր սիրելի պաշտօնակից Արքանեան  
էֆէնտիի կողմէ, արտասխանեցի թէ երբ  
պտտրաստականութիւն ունենալք, կը բերեմք  
պատասխանն:

Այսօր խնդիրը տակաւին այն աստիճանի  
չէ հասած՝ որ Կրօնական ժողովն ուղէ իւր կար-  
ծիքը տալ. բայց սրովհետև թէ՛ Պատ. ժողո-  
վոյց կողմէ և թէ՛ հասարակութեան մէջ փա-  
փաք կայ իմանալու թէ՛ ի՞նչ ընթացք բռնած  
է Պատրիարքարանն այս խնդրոյն մէջ, հարկ  
դատեցինք ներկայել Ձեզ առ Ամեն Մկրտիչ  
Կաթողիկոս ուղղեալ գիրն, որ պիտի յայտնէ  
այն ուղղութիւն և ընթացք՝ սրոյ հետևած է  
Կրօնական ժողովն: Գիտե՛լ տրուեցաւ թէ ի՞նչ  
օգուտ կար փոխանակեալ թղթակցութեանց  
հաւաքածոյն բերել ժողովին: Ձեզ ամենեցուն  
յայտնի է, Տեսա՛ք, Սահմանադրական Վար-  
չութեանց գործերը սահմանն, և մեք՝ իւր  
սահմանադրական Վարչութիւն, չուզեցինք ո՛չ  
տուալ անցնիլ այդ սահմանէն, ո՛չ ալ սեղմեալ  
մնալ: Սահմանադրական ազգաց մէջ սովորու-  
թիւն է որ Վարչութիւնք Խորհրդարանին կը  
հաղորդեն պաշտօնագրոց հաւաքածոյն ամփո-  
փող տեւորակներ, Խորհրդականք կը լսեն, կը  
սերտեն զանանք, իսկ եթէ՛ հարկ դատեն,  
դարձեալ Վարչութեան կը զմենն եզրակացու-  
թիւնն լսելու համար: Այսպէս և Կրօնական  
ժողովն կը հաղորդէ Ձեզ այսօր իւր գրած  
գրերն, և կը խնդրէ 'ի Ձէնձ հաւատալ թէ՛  
իւր փոխարք ո՛չ այլ ինչ է, բայց եթէ՛ պաշտ-  
պանել Հայաստանեաց Եկեղեցւոյ պատիւը, և  
արատուած չ'տեսնի՛լ զայն մէկ երկու տնար-



ժան Եկեղեցականաց պատճառաւ, այն աստիճան որ մինչև իսկ օտար լրագրաց մէջ կը հրատարակուի թէ Հայ եկեղեցւոյ պաշտօնեացբայց օրինակ բանարարութեանց օրինակ կը հանդիսանան : Կրօնական ժողովն ուղեց իմանալ թէ՛ Հաճոյ խնդրոյն մէջ ճշմարտութիւնն, արդարութիւնն ո՞ր կողմն են, բայց մինչև ցարք չ'կրցաւ որոշ կարծիք մը կազմել, ըստ որում զիտակ չէ դեռ գործոյն ճշդութեան :

**ՅԱՅՆԵՐ** — Գոհ եմք այդչափ բացատրութենէն :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Պահ մ'առաջ ժողովն ուղեց ըսել նախ հարկ եղած բացատրութիւնն և ապա ընթեռնուլ պաշտօնագիրն :

Սակայն բանի որ Կրօնական ժողովոյ Ատենապետ Սրբազանն կը յայտարարէ թէ, գործոյն ճշդութիւնն ց'արք չէ ստուգուած, ըսել է խնդիրն իրեն համար տակաւին պաշտօնագրէս լուսարանուած չէ, որպէս զի կարենար որոշում մը ընել : Ուստի պատահած դատած է սոյն խնդրոյ նկատմամբ իւր բռնած ուղղութիւնն ցոյց տալու համար ց'արք տեղի ունեցած թղթակցութիւնն ժողովոյս հաղորդել :

**Տ. Խ. ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ. ՊԷՏ** — Կը խնդրեմ որ կարգացուի յ'ատենի ժողովոյդ առ Կիլիկիոյ Կաթողիկոսն ուղղեալ գիրն որ ցոյց տիտի տայ թէ՛ Կրօնական ժողովն ո՞րպիսի անկեղծութեամբ և ուղղութեամբ վարուած է այս գործոյն մէջ, և թէ՛ սպագային ի՞նչ ընթացք պիտի բռնէ :

Ատենապետ էՖինտիի հրաւիրանօք Ատենագիրք էՖինտի կընթեռնու առ Տ. Մկրտիչ Կաթողիկոսն ուղղեալ պաշտօնագրին պատճենն :

**Ամենապատիւ Սրբազան Տէր.**

Ի պատասխանի հեռագրոյ Ազգ.

Պատրիարքարանի որ ի 10 ամսեանն

Սեպտեմբերի, ընդունեցայ Ձեր Ամեն. Սրբազնութեան Սեպտեմբեր 23 ամսաթիւ հեռագիրն՝ որ է :

«Նարկիզի պսակի խնդրոյն առթիւ Ձեր առած տեղեկութիւնք սխալ են, ինչպէս հաստատուած է աղկան մատուցած խնդրագրէն» :

Ազգ. Կեզր. Վարչութեան Կրօնական ժողովն, որում անմիջապէս հաղորդեցի սոյն հեռագիրն, ի գումարման անդ իւրում որոշեց որ մի պաշտօնագիր ուղղուի առ Ամենապատուութիւն Ձեր մանրամասն տեղեկութիւն խնդրելու Գրքեաշարեան Նարկիզի պսակագրութեան մասին, ըստ որում թէ Հայ և թէ օտար բազում լրագրաց մէջ նոյն պսակագրութիւն բռնի կերպով կատարուած կը հրատարակուի այնպիսի նողկալի նրկարագրութեամբք որք ոչ միայն ազգիս մէջ, այլ և այլախորն հասարակութեանց մէջ անգամ ամենածանր դայթակղութեան տեղի տուած են, որոյ արդիւնքն ծանր է, և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ լծնամեաց առիթ կուտայ զբարտել զայն յանիրաւի :

Սոյն դայթակղութեան ՚ի դարման Կրօնական ժողովն կառաջարկէ Ձերումդ Ամեն. Սրբազնութեան, որ բարեհաճի լուրջ քննութիւն մը բանալ սոյն խնդրոյն նկատմամբ, բաւական չհամարելով Նարկիզի գիրն, զոր կը յեշտատակէք Ձեր հեռագրոյն մէջ, և զոր նորա հայրն բռնաբար իւր ձեռքէն կորզուած կը հրատարակէ, բողոքելով միանգամայն և արդարութեան քննչին ըրած քննութեան դէմ իսկ :

Արդ՝ Ազգ. Կրօն. ժողովն կուզէ ի-

մանալ նախ, թէ Գեր. Տ. Կիրակոս Ե. պիսկապոս Բէքմէղճեան որ աստիճան միջամտութիւն ըրած է Նարեկիղի ամուսնական խնդրոյն մէջ, և թէ որ աստիճան ստուգութիւն ունին այն բռնադատական իրողութիւնք զորս լրագիրքումանք կը հրատարակեն սոյն պսակագրութեան առթիւ:

Երկրորդ՝ Նարեկիղ իւր ամուսնութեան հաւանութիւնն ընդ Հայրապետ անուն անձին ե՞րբ տուած է. յառաջքան զամուսնութիւնն թէ՛ յետոյ կամային, թէ՛ ակամայ:

Երկրորդ՝ Պսակի խորհուրդն որ ի դաւառս կը կատարուի պաշաճապէս յեկեղեցւոյ, որպէս յայտ իսկ է, ի՞նչ պատճառաւ կատարուեր է ի տան Տ. Ստեփան քահանայի և եթէ հարկ դատուած էր ի տան կատարել զխորհուրդ պսակին, ինչո՞ւ չէ կատարուած ի տան Նարեկիղի կամ Հայրապետին, որ առաւել քան զամենայն պատշաճադոյն և մանաւակդ բնական:

Չորրորդ՝ ի՞նչ պատճառ կայ որ Նարեկիղի հայրն կը դիմէ չարունակ առ Պետութիւն, առ Ազգ. Պատրիարքարանըս, առ լրագիրս և առ մասնաւոր անձինս բողոքելու տեղի ունեցած պսակագրութեան նկատմամբ: Բայց յայլոց ներփակեալ հեռագիրն որ առաւել բուռն է և նկատելի, Ազգ. Պատրիարքարանս ընդունեցաւ ի միասին ընդ հեռագրոյ Չերդ Ամենպատուութեան, որոյ վաւերական պատճէնն է:

Ազգ. Վարչութեան Կրօն. Ժողովն արժան կը դատէ զնոյն հեռագրոյ պատճէնն հաղորդել Չեր Ամեն. Սրբաղնութեան գիտել տալով որ սոյն և նման

ընակ գրութիւնք ներկայացուած լինելով ոչ միայն Ազգ. Պատրիարքարանիս, այլ և յատեան Սրբարութեան Նախարարութեան հարկ ի վերայ կայ կատարել մի անաչառ քննութիւն, որպէս զի ճշմարտութիւն յերևան դայ, և յանցաւորք յայտնուին առաջն Պետութեան և առաջն համօրէն Ազգին, որպէս և առաջն ատենի հանրային կարծեաց:

Չեր Ամեն. Սրբաղնութեան արդարասիրութիւնն և նախանձախնդրութիւնըն պատուոյ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ առաւել պիտի փայլին սոյն առթիւ, անարժան և պարտադանց եկեղեցականաց եթէ կան երբէք սոյն խնդրոյն մէջ, տալով արժանաւոր և օրինակելի պատիժն, որպէս զի չկարծուի թէ Հայ եկեղեցականութիւն համբարչխութիւն ունի այնպիսի եկեղեցականաց հետ, որք կը յանդգնին պսակ դնել բռնաբար, և հոչակուի ՚ի սփեւռս աշխարհի, թէ Հայաստանեայց Առաքելական և ուղղափառ Ս. Եկեղեցին չ'ընդունիր բնաւ երբէք զայն պսակագրութիւն, որ կատարուած է բռնի, և պատժոյ կը դատապարտէ զպսակագիրսն ոյք և իցեն:

Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովն կը յուսայ իրաւամբ թէ Չեր Ամեն. Սրբաղնութիւն պիտի բարեհաճի սոյն հանրածանօթ խնդրոյն արդար լուծումն տալ անաչառ քննութեամբ, և տեղեկագրել վաղ ընդ փոյթ առ Ազգ. Պատրիարքարանս:

Մնամ համբուրիւ Ս. Աջոյ  
Ամեն. Սրբաղնութեան Չերոյ  
Պատրիարքական Փոխանորդ  
Գեորգ Ծ. Վարդ. Բուսմուցեան

4 Հոկտեմբեր 1884  
Կ. Պոլիս

(Սոյն գրին ընթերցումն յետոյ, Ժողովականք յամենաւստ գոհունակութիւն կը յայտնեն առ Կրօնական Ժողովն, և Փառազեան էֆէնտի կուսակարգէ որ սոյն գրին հրատարակուի ՚ի լրագիրս :

ՍՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես ալ կը ծայնակցիմ մեծարոյ պաշտօնակցացս և գոհունակութիւն կը յայնեմ Կրօնական Ժողովոյ կողմանէ ցոյց տրուած նախանձախնդրութեան համար : Բոց կը փութամ միանգամայն յայտարարել թէ պաշտօնական աղբիւրէ տեղեկութիւն ստացած եմ որ Ատոնայի Կուսակալութեան դատական Քննչին կողմէ դատական Նախարարութեան տեղեկագիրք մը ելած է հեռագրաւ, որ կը հաստատէ Հաճնոյ ամուսնութեան ըրանութեամբ կատարուած լինելն :

Հետեւարար կը խնդրեմ Կրօնական Ժողովն՝ որ սոյն վաւերական և ստույգ տեղեկութեան վրայ, փութայ հարկ եղած միջոյները ձեռք առնուլ և ազգու տնօրինութիւն մ'ընել :

Միանգամայն հարկ է յայտարարել թէ, երբէք Հայաստանեայց Եկեղեցւոյ թշնամի պէտք չէ՛ նկատել անոնք որք այս տեսակ գայթակղական դէպքեր երևան կը հանեն և խիստ բննադատութեանց կը դիմեն : Ընդհակառակն ես հաստատ համոզում ունիմ որ եթէ մեր կրօնական և ազգային իշխանութիւնք անաչառապէս չ'սլատմեն զեղծում գործող եկեղեցականներն, յայնժամ կը տկարանայ հայ եկեղեցականութեան վարին ու պատիւը, մինչ քննադատութիւնք զայն բարձրացնելու կը մտին :

Տ. Խ. ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՅ — Մեր սիրելի պաշտօնակիցն կերիսց թէ իմ խօսիցս իմաստն սխալ ըմբռնած է :

Ես բնաւ չ'յայտարարեցի թէ երեպիտխանութեան կամ լրագրութեան մէջ կան այնպիսիք, որք Հայաստանեայց Եկեղեցւոյ թշնամի են : Ես միայն ցու յայտնեցի թէ մի քանի ե.

կեղեցականաց վարձանց շնորհիւ՝ Հայ Եկեղեցւո՞ւ պաշտօնեայք օտար լրագրաց մէջ այդ օրինակ բռնաբարութեանց հեղինակ կը հանդիսանան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լրագրոց մէջ եղած հրատարակութիւնք բնաւ այս Ժողովոյց մէջ արձագանք չեն կրնար գտնել, Սրբազան Հայր, և ոչ ալ խնդրոյ նիւթ լինել :

Տ. Խ. ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՅ — Ուրախ եմք որ այս առթիւ ևս Պատ. Ժողովոյք գոհունակութեանն արժանացանք և կրնայք վստահ լինիլ թէ՛ Ձեր Կրօնական Ժողովն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անեղծ պահպանման միշտ պիտի հսկէ :

ՋԱՅՆԵՐ — Մենք ալ գոհ եմք :

ՄԷՐԵՏԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ յայտնուած գոհունակութիւնն պահասար կողմ մ'ունի, ուստի երկու բառով զայն ամբողջացնել կուզեմ :

Կրօնական Ժողովոյ գրին կարգացուած պահուն, ամեն անոնք որ Հաճնոյ խնդիրը զիտէին, դո՛ս մնային, իսկ անոնք որք Կիլիկիոյ Կաթողիկոսական խնդիրը զիտեն, շատ աւելի գո՛հ մնային :

Չայս ըսելէ յետոյ, կը փութամ յայտնել նաեւ թէ՛ լրագրոց մէջ Ազգային ու է իրնդրոց վրոց տեղի ունեցած հրատարակութիւնք բնաւ այս Ժողովոյց մէջ խնդրոյ նիւթ չեն կրնար լինել, որպէս իրուամբ զիտել տուաւ Ա. տենապետ էֆէնտի :

Այս Ատենապետ էֆէնտի քուէի դեմով Կրօնական Ժողովոյ պատասխանաշրին և բացատրութիւնքն, Ժողովն միանայնութեամբ ԳՈՒՅՈՒՅՈՒՅՈՒՅ և չ'ընեն այս մասին ցարք եղած գործողութիւնքն :

6 .

Հարցագիրք երեք Երեսփոխանաց ուղ-  
ղեալ առ Ազգային վարչութիւն.

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Օրակարգի անցնելէ  
յառաջ կը փութամ ժողովոյդ հաղորդել մեր  
սլաշտոնակիցներէն Փափագեան, Ղազարսեան  
և Թիւրլիտեան էֆէնտիկ կողմանէ առ Ազ-  
գային վարչութիւնն ուղղեալ հետեւեալ հար-  
ցագրերն :

Չայս ասելով Ատենապետ էֆէնտի կը հը-  
րուիրէ զԱտենաղալիք էֆէնտի ընթեւումը կար-  
գաւ յիշատակեալ հարցադրերն :

Գրեթէ երկու ամիս յառաջ լրաց-  
րաց մէջ կարդացինք թէ Իւսկիւտարցի  
Գուրտեան Կարապետ աղա դատ բացած  
է Տէր Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր  
դէմ, կտակային խնդրոյ մը համար : Իւս-  
կիւտարու Հոգեւոր դատարանը կոչնա-  
գիր զրկեր է ի Պատրիարքարան, և Պատ-  
րիարքական Փոխանորդ Հայրն պատաս-  
խաներ է թէ, Ն. Սրբաշնութիւն հի-  
ւանդ է և բժիշկը արգիլած են ամեն  
աշխատութիւն, ուստի հարկ է սպասել  
առողջանալուն :

Վերջին օրերս դարձեալ կարդա-  
ցինք թէ, Գատարանը լսած ըլլալով որ  
Ս. Պատրիարք Հայր առողջութիւնը գը-  
տած է կամ գտնալու վրայ, կրկներ է  
իւր կոչնագիրը :

Արդ կուզեմ իմանալ թէ, ստոյգ  
է Փոխանորդ Հօր այդ պատասխանն, և

1. Եթէ Ս. Պատրիարք Հայր հի-  
ւանդ չլիներ, անձամբ կամ փոխանոր-  
դաբար պիտի ներկայանար ի դատա-  
րան Իւսկիւտարու :

2. Տէրութեան օրէնքը կը պահան-  
ջէ՞ որ Պատրիարքներն իրենց պաշտօնա-  
կան մէկ դործին համար Հոգեւոր դա-  
տարանաց առջև ի դատ հրաւիրուին .  
ուրիշ Պատրիարքի դէմ ալ այդպիսի  
դատ բացուած և կոչնագիր յղուած է,  
թէ առաջին անգամ մեր Ս. Պատրիարք  
Հօր կը պատահի այդ բան :

Ազգային Երեսփոխան  
Ս. Գ. Գ. Փալիպեան

12 հօկտ. 1884

Վսեմաշուք Ատենապետ Ազգ. Կեդր.  
Ժողովոյ .

Լրագրաց մէջ կարդացի թէ Եգիպ-  
տոսի նախկին առաջնորդ Մերոպ Սըր-  
բազանի Եգիպտոսի Ազգ. սնտուկէն ու-  
նեցածն պահանջը վճարուեր է Կեդր.  
Վարչութեան որոշմամբ, և թէ Մերոպ  
Սրբազան առաջնորդական ցանկին մէջ  
անցեր է :

Ասկէ կը հետեւի թէ Մերոպ Սըր-  
բազանի պահանջը արդար է եղեր, և  
ինքն Մերոպ Սրբազան ալ ամենը :

Ուրեմն կ'հարցնեմ թէ Մերոպ  
Սրբազանի 1470 ոսկւոյ պահանջքն որ  
տօկոսներով 2-3000 ոսկւոյ բարձրա-  
ցած էր և զորս ստացաւ Մերոպ Սըր-  
բազան Եգիպտոսի Ազգ. սնտուկէն, ինչ  
բանէ գոյացած էր, Կ. Պօլսոյ մէջ այդ  
ահագին դուժարն ծախք ըրած եմ կը-  
սէ կեր, Կ. Պօլսոյ մէջ ինչ բանի ծախք  
ըրած է, Կեդր. Վարչութիւնը քննա-  
հասկցած է, կը փափաքեմ որ այդ ծա-  
խուց մանրամասնութիւնը ներկայանայ  
ժողովոյս քանիցս ըրած եմ այս հար-  
ցումը, կը յուսամ թէ այժմ պատաս-  
խանը կընդունիմք :

Ազգային Երեսփոխան  
Բ. Ղազարոսեան

11 հօկտ. 1884  
Կալաթա

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Աղգ. Երեւոյ ժողովոյ .

Վսեմապատիւ Տէր

Նկատելով որ առաջնորդական ընտրութեամբ զբաղող գաւառաց մէջ կը զտնտին այնպիսիք՝ որք իւրեանց վիճակին վրայ արդէն ձեռնադրեալ իսկ բացակայ եպիսկոպոս մ'ունենալով հանդերձ, ինչպէս է օրինակի համար Տրապիզոնի վիճակը, նորոգ առաջնորդի կամ եպիսկոպոսի ընտրութեանը կ'ձեռնարկեն ,

Նկատելով որ վիճակային թեմի մը վրայ եպիսկոպոս ձեռնադրեալ առաջնորդ մը՝ ըստ օրինի Հայաստանեայց եկեղեցւոյ՝ պատկեալ կ'համարուի նոյն թեմին հետ և պսակն անքակտելի կը մնայ ցկեանս պատկելոյն ,

Նկատելով որ այս օրինակ պատահականութիւնք՝ Աղգ. եկեղեցւոյ գաւառոր և էական օրինաց հիմնական և կարեւոր խնդիր մը յերեւան կ'հանեն ,

Նկատելով որ ժամանակէ մ'իւրեր եկեղեցական սոյն էական օրինաց դէմ գործուած զեղծմունք և զանցառութիւնք՝ բանաւոր և զօրեղ պատճառ մը չ'են կարող համարուիլ որ այդ օրինակ զեղծմունք և զանցառութիւնք տակաւին շարունակեն ընդ երկար ,

Միմիայն Աղգ. եկեղեցւոյ օրինաց և կանոնաց պահպանութեան և յարգանացը նախանձախնդրութեան ոգիէ չարժեալ, հարկ կ'համարիմ հետևեալ հարցումներն ու դիտողութիւնքը առաջի առնել ՚ի նկատառումն Աղգ. Կեդր. պատկառելի վարչութեան, որ ունի զբաղիլ մտտերս այդ օրինակ առաջնորդական խնդրովք, թէ՛

Ա. Հայաստանեայց եկեղեցին ի՞նչ պարագաներու մէջ կ'ներէ որ՝ վիճակի մը վրայ յատկապէս ձեռնադրեալ ե. պիսկոպոս մը հրաժարի կամ հրաժարեցուցուի , և թէ յիշեալ առաջնորդ եպիսկոպոսն հրաժարելէն յետոյ, ի՞նչ վիճակի մէջ պէտք է ապրի և անցընէ իւր կեանքը ըստ կանոնաց Հայաստանեայց եկեղեցւոյ :

Բ. Հայաստ. եկեղեցին կ'ներէ՞ արդեօք, և ինչ պարագաներու մէջ որ վիճակի մը վրայ յատկապէս ձեռնադրեալ իսկ հրաժարեալ կամ անդիմադրելի պատճառաւ մը հեռանալու հարկադրեալ առաջնորդ եպիսկոպոսի մը դեռ կենդանութեանը միջոցին, նոյն գաւառն իրեն համար ուրիշ առաջնորդ մ'ընտրէ և զնա եպիսկոպոս ձեռնադրել ապ իւր իսկ վիճակին վրայ :

Գ. Ըստ այսմ Հայաստանեայց եկեղեցին կ'ներէ՞ որ միևնոյն պահուն մի և նոյն թեմին եպիսկոպոսութեան տիրաւորը կրող մէկէն աւելի եկեղեցական գանուին միանգամայն միևնոյն եկեղեցական մարմնոյն մէջ :

Դ. Հայաստանեայց եկեղեցին կը ներէ՞ որ առաջնորդ եպիսկոպոս մը իւր պատկեալ թեմին առաջնորդութիւնը թողլով հրաժարելէն յետոյ, նոյն թեմին վրայ ձեռնադրուած ատենն ստացած նոյն վիճակային եպիսկոպոսութեան տիրոջը կրելու իրաւունքէն ալ միանգամայն հրաժարի :

Ե. Հայաստանեայց եկեղեցին կ'ներէ՞ որ վիճակի մը վրայ եպիսկոպոս ձեռնադրեալ առաջնորդ մը իւր թեմէն հրաժարելով՝ կարենայ ուրիշ թեմի մ'առաջնորդական պաշտօնն ու սոյն թեմին

եպիսկոպոսութեան տխրոցան ստանձնել :

Առաջի առնելով Ազգ. կեդր. պատկառելի վարչութեան 'ի նկատողութիւն՝ զուտ Ազգ. եկեղեցական օրինաց վերաբերեալ այն հարցումներն ու դիտողութիւնքը, կ'առաջարկեմ որ սոցա պատասխանիքն ու վճիռն ստանալէն յետոյ Ազգ. եկեղ. Համագումար ժողովէն, որքն որ այս օրինակ խնդրոց մէջ միակ հեղինակութիւն ունեցող ձեռնհաս և վճռատու մարմինն է, ապա ըստ այնմ կարգադրէ այնպիսի պարագայից և հանգամանաց ներքեւ դանուող դաւառաց առաջնորդական ընտրութեան խնդիրներն :

Ազգ. Երեսօխոսան  
Ն. Թիւլպիետճեան

12 հոկտ. 1884

Կ. Պօլիս

Ժողովն լսելով այն հարցադրերն, ԿՈՐՈՆԵՆ անոնց առաջին և երկրորդն յղել առ Բաղարական ժողովն 'ի քննութիւն և 'ի տեղեկագրբութիւն, և երրորդն առ Կրօնական ժողովն 'ի նկատառումն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նոյնպէս մեր պաշտօնակիցներէն Ֆէլէկեան էֆէնտի կողմանէ հետեւեալ հարցումն ուղղուած է Գիւանիս :

Վսեմ. Տէր Ատենապետ Ազգ. Երես. Ժողովոյ

Նախորդ նիստէ յառաջ Ազգ. Պատ. րիարքարանի ներքին պաշտօնէից միոյն վերաբերութեամբ հարցում մի ուղղեցի առ պատուարժան Գիւանդ, կը խնդրեմ յայտնել թէ ո՞ր մնաց խնդրոյն պատասխանը :

Ազգային Երեսօխոսան  
Սիմոն Ֆիլիկեան

12 հոկտ. 1884

Ղալաթիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի պատասխանի Ֆէլէկեան էֆ.ի այն հարցման, Գիւանն եւս կը փութայ յայտնել թէ՛ այս մասին վարչութեան պատասխանադիրն ց'արդ չ'է հարցողուած իրեն :

ՖԷԼԷԿԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ Ս. Մարտի և Նոյն արտասխանէ ինչ պիտի ընեմք : Պէտք է զրեւ և պահանջել վարչութեան որ փութայ զրեւ իր պատասխանն :

ՓՊՊԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ միայն ասոր համար, այլ ասիէ յառաջ եղած ուրիշ զանազան հարցմանց պատասխաններն ալ պէտք է պահանջել :

ԱՅՎԱԶԵԱՆ Ն. ԷՖ. — (Անդամ Բաղ. Ժողովոյ) Եթէ ժողովը կողմ լսել, պատրաստ եմ բերանացի հարկ եղած բացատրութիւնն տալ :

ՖԷԼԷԿԵԱՆ ԵՒ ՄԷԼԻՔԵԱՆ ԷՖԵՆՏԻՔ — Այն, զրաւոր պէտք է հարցողութի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէեւ տակաւին մեր սեղանին վրայ կը կենան մի բանի կտոր ատեն նախան թղթեր, բայց ըստ որում տոնենական գործողութեանց համար օրոշեալ ժամն լրացած է, ուստի վերապահելով զայն մեր յատկապ նստին, այժմ ձեռք կ'առնուիք Օրասկարն :

Բ.

Խնդիր երեսօխոսանութեան Թադեոս Է. Ֆիլիկեանի, — Զարուակութիւն վիճարանութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս զիտէ ժողովը, Օրակարգին է Պէլէկեան էֆէնտի երեսօխոսանական խնդրոյն վիճարանութեան շարունակու-

թիւնն ։ Եւ ըստ որում անցեալ նիստէն առաջին խօսքն Գորգէն էֆէնտիինն է ։ ուստի կը հրաւիրեմ զինքն 'ի բեմ ։

**ԳՈՐԳԷՆ Յ. ԷՅ.** — ( Բեմն ելնելով ) Առնոյտըրեալ խնդիրն առիթ ունեցած եմ որ սուֆնասիրել իրբեւ նախորդ Մայր-Գիւտանի անդամ, որուն յանձնարարուած էր, ինչպէս զի տէր, խնդրոյն նախնական քննութիւնն ։ Հէտեւարար այժմ հոս համուզում մը բերած եմ, անուղում, զոր ինձ համար վերջնական ճշմարտութիւն չեմ կրնար համարել, և երբ ըսեմ հակառակ կողմի փաստերն, յայնժամ իմ քուէս յայտնի պիտի տամ 'ի նպատակ կամ ընդդէմ խնդրոյն ։

Կը խնդրեմ Պատ. պաշտօնակիցներէս չը ընդմիջել զիս, ըստ որում եթէ Գիւտատէնէս մ'ալ լինիմ, դարձեալ չեմ կարող զանաղան ընդմիջմանց մէջ չ'կորուսանել խօսաց թէն ։ Աստի վերատին կուգամ կուշմն ընել նոցա արքայապետութեան և կ'աղաչեմ որ բարեհաճին հանձնարու և անխտով ունին զնել ինձ ։

Նախ անցողորար — թէ և ոչ նուազ կարևորութեամբ — հարկ կը համարիմ յայտարարել թէ՛ իրաւ է որ այն խնդրոյն բնութիւնն առընչութիւն սննի արդէն Ամեն. Սրբազան Պատրիարքի անուան հետ, բայց ըստ իս խաբայէս քննել այս խնդիրն, արդարութեան հարկը ընուլ, այս բան չէ կարող ամանել այն մեծարանաց և պատկատեանց՝ զոր կը տածեմք առ Ամեն. Սրբազան Հայրն մեր, և ոչ այն բացատիկ համոհրութեան առ Նորին Սրբազանութիւն՝ իւր այս հիւանդագին աուրց մէջ ։

Արդ կանցնիմք բուն խնդրոյն ։ — Իմ խօսիցս շարունակութեան մէջ պիտի զգուշանամ ժողովոյս արտաքին յարաբերութեանց մասին որ և է ակնարկութիւն մ'ընելէ, և բուն խնդրոյն վրայ պիտի կեդրոնացնեմ իմ քննութիւնս շրջահայաց խոհեմութեամբ ։

Եւ նախ քան զայս, կուզեմ նախընթաց նստին մէջ օրուան խնդրոյն առթիւ մի բանի

Պատ. երեսփոխանաց կողմանէ տեղի ունեցած ինչ ինչ առարկութեանց պատասխանել ։ Հարկ չեմ համարիր պատասխանել Մէլիբեան էֆէնտիի, ըստ որում Պատ. Ժողովք որոշեց առ սչինչ զրել Պէկեան էֆէնտիի յանձնառագործն յետս 'իոյնան զիրն ։ Իսկ գալով Սըղմանեան էֆէնտիի այն խօսքին թէ՛ « Ազգացին ժողովս մինչև իսկ մէկ անձի հաճելի լինելու չափ չը կրնար ստորանալ », կը պատասխանեմ թէ՛ « Երեսփոխանի մը Սահմանադրութեան իրաւանց վրայ խորհիլն և խօսիլն երբէք ստորնութիւն չ'կրնար նկատուիլ այլ ոճիւր, ստորնութիւն, ազգավիաս բոտերն, որք վերջին անգամ անկանջիս հնձեցին աստ, կրնան նսեմացումն բերել ժողովոյս արժանապատուութեան ։ Իսկ Չօպանեան և Մագդուլեան էֆէնտիք իմ խօսիցս շարքին մէջ միայն պիտի աւնուեն իրենց պատասխանքն ։

Գալով Ձերադ Մ. էֆէնտիի, որ կատարել է թէ՛ « ժողովն Պէկեան էֆէնտիի նկատմամբ տուած վճռոյն զորմադրութեան մասին որ և է անտեղութիւն մը չ'տեսներ » կը պատասխանեմ թէ՛ Ազգ. ժողովս վերջի կաթոզիկոսական ընտրութեան մէջ ալ թէ և 1866 ի ընտրական եղանակն ընդունեց և վերահաստատեց, և առ այս բազմաթիւ նիստեր ալ զո՛հեց, սակայն 'ի վերջէ բարեփոխեց զայն, առանց անոր անգործադրելի լինիլն կարենալ հաստատելու, ինչպէս նաև ծանօթ բարեփոխմանքն զորմադրութեան վրայ վստահ լինելու ։

**ՁԵՐԱՋ Մ. ԷՅ.** — 1866 ին ներքին կանոնադիր չունենք ժողովս ։

**ՁՅՊԱՆԵԱՆ Մ. ԷՅ.** — (Առ Գորգէն էֆ.) Ձեր այդ խօսքերն խնդրոյն հետ բնաւ յարակիւն չունին ։

**ՄԻ ՔԱՆԻ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ** — Թողէք որ շարունակէ ։

ԱՅՏԵԱՊԵՏ ԷՖ. — Խնդրեմ, թողէք Աստուծոյն Եփ. շարունակել: Եւ դուք Գուրգէն Եփէնտի, հաճեցէք ըստ կարի ամբիտիւր Զեր խօսքն և դասնալ բուն խնդրոյն:

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — (Շարունակելով) Ըսել է թէ Ազգային ժողովն կրնայ եղև դասնալ իւր մեկ որոշումէն, առանց անոր գործադրելու կամ ոչ գործադրելու լինելուն կանխաւ համազօրութեամբ: Բայց 'ի վեր քան դասնայն, գիտէք Տեալք, որ օրինակն սկզբունք մը կայ և եթէ՛ որ ես ե վճիռ, որ օրինաց նամանայն տրուած չէ, բեկանելի է, և վստահ եմ ժողովոյդ արգարատնութեան վրայ որ եթէ անպիտան մէջ օրինաց հակառակ վճիռ մ'արձակած է, պիտի ուզէ բեկանել զայն յենարար գործութեան օրինաց վրայ:

ՋՈՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Ներկայ պարագայիս մէջ այդ տեսակ բան չը կայ, զի տրուած վճիռն ոչ օրինաց և ոչ ալ արդարութեան հակառակ էր:

(Զանազան նստարաններէ աղմուկք)

ՃԱՆԸՐԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ Ատենարան Եփէնտին այսօրինակ մանրամասնութեանց մշտնադէպ, չէ կարելի այսօր բուժարութիւն կատարել:

ՂԱՅԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ի՞նչու կաճապարէք. պէտք է խնդրոյն երկու կողմերն ալ մտիկ ընել և ապա որոշում տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիտել կուտամ ընդմիջող տեսաց թէ, այն պայմանի ներքեւ կարելի չ'է Դիւանիս վարել զիւր պաշտօն: Եթէ կողմէք որ Ատենարանն կարճ խօսի, թողէք որ շարունակէ առանց զինքն ընդմիջելու: — Շարունակեցէք Գուրգէն Եփէնտի, բայց զգուշանալով կրկնութիւններէ և աւելորդ պարագաներ յստաջ բերելէ:

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Այժմ անցնելով բուն խնդրոյն, զայն երկու մասանց կը բաժնեմ: Ա. Երեսօրէնութեան հանրային խօսանց մասի, և Բ. Պէկեան Եփ ընտրութեան մասնաւոր խնդրն:

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. — Պիտի խնդրել Ատենարան Եփէնտի, որ եթէ կարելի է, մի միայն երկրորդ մասին վրայ հասնի խօսիլ, զի առաջինն զիտեմք արդէն:

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — (շարունակելով) Ես մեր օրինաց սահմանէն դուրս չ'պիտի ելնեմ, որպէս յայտարարեցի պահ մ'առաջ: Սահմանադրութեան ճճրդ յօդուածն կըսէ՛ « Ընտրել են Ազգ. այն ամեն անհատները, որոնք երեւստն տարին լրացուցած ըլլալով, Օսմանեան « հպատակ, Տէրութեան օրինացը տեղեակ, « և ազգային դրօնոց հմուտ են, և ընտրելի « ռութեան իրաւունքէն ըստ Ճ՞րդ յօդուածոց « զբխուած չեն »:

Այսպիսի որ երբէք անարժան չ'կրնար հոչակուիլ Երեսօրէնութեան հանգամանքներէն երբ մէկն ընտրելութեան հանգամանքներէն զրկուի, ընտրութեան հանգամանքներէն ալ կը զրկուի, և ասով Պէկեան Եփէնտի և ոչ խի պարզ թաղականի մ'ընտրութեան կրնայ մասնակցիլ: Արդ՛հետեւ, երբ Սահմանադրութեան պահանջած հանգամանքներն ունենայ ազգային անհատ մը, յայնժամ քաղաքական իրաւունքներէ զրկեալ նուազագ Մետեհիտեան միւսեպպետեան սագրք պէտք է լինի. որպէս զի երեսօրէնութեան անորժան չ'ընտրուի, և զիտեմք թէ որչափ ծանր պատասխանատուութիւն մը կը հրապարակէ մեր վրայ այսօրիս վճիռ մ'արձակելով. վճիռ՝ զոր միայն կառավարութեան ձեռննստ դատարանք կարող են արձակել երեսնադարձութեան պարագայից մէջ յստակ արտասանմամբ: Իսկ մեր ներքին կանոնադրո՞ւ որ ընդլայնում մ'է Սահմանադրութեան, կը թուէ այն պայմաններն՝ որոնցմով 'իսկ կարելի է կապուել եւ



բեափոխանի մը ընտրական իրաւունքն , և Աղբալային ժողովն այդ պայմաններէ դուրս՝ չէ կարող երեսփոխանի մը իրաւունքն մերժել , զի երեսփոխան մը այս ժողովին ապրանքն չի , այլ Ազգիք երեսփոխանն է : Շատ իրաւամբ ըսած է լարեկիշատակ Խօսատարեան թէ՛ երեսփոխանի մը անձը և իրաւունքն անբըտնարարելի է :

**ՁԱՅՆ ՄԸ . — Նոր բան մը չէ այդ :**

**ԳՈՒՐԳԷՆ ԷՖ. —** Ո՛չ , նոր բան չէ : Անշուտ ժողովը կը յիշէ Իզմիրի Պատ. երեսփոխան Պատրեան Է.Ք. ի խնդիրն : Մենք ինչ պատասխանեցինք անոնց — ըսինք թէ՛ նա այլ ևս ձեր երեսփոխանն չէ , այլ Աղբալն :

Պէտք է Տեարք , զիտնալ թէ՛ Պալայ այս Աղբալին ժողովն է որ օրինակ պիտի տայ Գաւառական ժողովոց , զի կրնայ պատահիլ որ անոնց մէջ ևս գտնուին երեսփոխանք , որը հակառակ լինելով սահմանադրին , կամ զիւտողութիւն ընելով նորա արարքներուն դէմ , հրաժարեցուցուին իբրև ամբաստանիչք :

Մեր Սահմանադրութեան լարեկիշատակ հիմնադիրք , նորա որք կը ննջեն այլ եւս , և նորա որք կենդանի են , շատ լաւ նախատեսած են այս պարագայն , որով և չարժած են հետադարձ իմաստութեամբ :

Աղբալին ժողովն անշուտ իւր բարձր արժանապատուութիւնն պահելու համար զերեսփոխանն յուղղութիւն բերելու պատժներ ունենուլ է : Մեր ներքին կանոնադրի 103րդ յօդուածն կը թուէ այս պատիժներ զորս ատ թուել աւելարդ է : Արդեօք հարկ չ՞Աղբալին ժողովոյ արժանապատուութեանն համար պամանել այն տեսակ պատիժներ ալ որոնց զօրծաղրութիւնն կրտելի լինի : Ի՞նչ կրնամք առ երեսփոխանի մը իբր պատիժ , ևերուսմ ինկրել ճրարարակաւ , եթէ ինք յանկարտ ամբաստանած ըլլայ զՍ. Պատրիարք Հայրն : Բայց եթէ երեսփոխան ոք յանդիմնի հետեւել ,

մեր ներքին կանոնադրն օգնութեան կը հասնի , որ կ'ըսէ թէ՛ « ժողովին արտասանած պատիժները Ատենադրութեանց մէջ կ'արձաւ » « դուրսն , իսկ այս միջոցներուն հետեւ յան » « դրաժնովն անունը՝ եթէ ըլլայ այդ աստիճան » « կանոնողանց՝ հասարակաց թերթ կրով ալ կը » « տարածայրի , 'ի հրատարակ տողով ատենս » « դրութեան անջ քաղաածը ուր պատիժը » « յիշած է : »

Օրէնքն կանխատեսած է և իւր 106րդ յօդուածովն րայորոշ կը յայտնէ թէ՛ « կ'ընկ » « նի երեսփոխանութենէ այն անձամբ որ ժողովարանին մէջ կամ շուրջը ոճիւր մը գործ » « ծէ : » — Աղբալին ժողովն իրաւունք չունի րայ ի կանխատեսեալ պարագայից՝ պաշտօնանկ ընել երեսփոխան մը կամ ու է անհատ անարժան հռչակել երեսփոխանութեան : Այս կէտն պատմական կարեւորութիւն ունի , ինչ որ սմանք ստորութիւն կը համարին : Այս տեսակ ընթացք մը սյսօր Պէհեանի , վաղն Թորոսեանի և միւս օր Գուրգէնի դէմ 'ի գործ կրնայ դրուիլ :

**ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. —** (Ընդմիջումք ) Տարակոյս չ'կայ , ամեն երեսփոխանի դէմ ևս 'ի գործ կրնայ դրուիլ , եթէ նոյն ընթացքն ունենան :

**ԹԻՒԼՊԷՏՅԱՆ Ն. ԷՖ. —** Միթէ՞ . . . . շատ յաւաք կերթար :

**ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. —** Միտնգամ ընդ միւտ հարկ է զիտնուլ թէ՛ Աղբալին ժողովն ըստ պարագայից՝ օրէնք չ'կրնար հաստատել . նախ պէտք է օրինաց ծրագիր մը ներկայացուի , բնութի , և ըստ այնմ բռնարկելով գործադրութեան դրուի : Հարկ է՞ յիշեցնել Ձեզ Պ. Պրատը անաստուածն որ քսան անգամ ընտրուեցաւ րայց չ'կրցաւ վաւերանալ , ըստ որում օրինաց հակառակ՝ երբում յ'անձն չ'էր առնուր — եթէ՛ առանց օրէնք դնել գործելու եղնեմք :

մենք մեր ձեռամբ քանդած կը լինիր մեր նախ-  
նիքներէն մեզ աւանդ մնացած Սահմանադրու-  
թեան նուիրական սկզբունքներն : Ես Սահմա-  
նադրութեան հաստատութեան ժամանակ մա-  
նուկ մ'էի անբարբառ, բայց բնա՛ շեմ կընար  
դեղձանէլ զայն և պիտի լինիմ միշտ անոր հա-  
ւատարիմ աւանդապահն . . . . :

(Զանազան նատարաններէ աճնամբերու-  
րեան ցոյցեր)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կը հրաւիրեմ Ատենա-  
բան էֆէնտի Եղբայրացութեան յանդիլ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՑ. — Բայց կը խնդրեմ որ  
Երեսօրեան պաշտօնակիցներս քիչ մ'աւելի  
համբերութիւն ունենան զիս մտի՛ց ընելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Այդ մտան դանդա-  
տելու իրաւունք չ'ունիք, Գուրգէն էֆ. զի կը  
տեսնէք թէ յետ այսբան անհամբերութեան  
ցոյցերու գրեթէ ժամ մ'է որ Երեսօրեանը  
մտիկ կընեն զՁեզ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՑ. — (Շարունակելով)  
Այժմ կ'անցնիմ Պէկեան էֆի Երեսօրեանու-  
թեան մասնաւոր խնդրոյն :

Այս ժողովս Պէկեան էֆ. ի դէմ վճիռ  
մը տուած է, այդ վճիռն օրինաւոր է թէ ոչ,  
քննեմք :

Կը յիշէք թէ 1873 Յուլիս 21 ի նախին  
մէջ համարատուութիւն մը եկած է ժողովոյս  
ճանուցեալ խնդրոյն վրայ, և Պէկեան էֆէն-  
տի լսելով նախ համարատուութիւնն, յայտա-  
բարած է թէ՛ ինքն առ այս զխտորութիւններ  
ունի և ըրած է զայն, և նոյն նախին ժողո-  
վըն մերժած է Ատենապետ Բաշայի նախա-  
վճիռն, որ էր « փակել խնդիրն հանդերձ չը-  
նորհակալուք առ Ս. Նախագահն » և քննիչ  
Յանձնախումբ մը կազմած է : Այդ ուրեմն  
ժողովն Պէկեան էֆ. ի դիտողութիւնը նկատու-

ղութեան տուած է : Քննութիւն մը կրնայ  
մեզմ կամ խիստ լինիլ, կրնայ նաև իրաւացի  
կամ անիրաւ ըլլալ. բայց Սահմանադրական  
ժողով մը չ'կրնար երբէք բնադատողին զա-  
նալ իրաւունք բնադատութեան, կամ ամբաս-  
տանութեան գոյն տալ անոր և զրկել զինքն  
խր երեսօրեանական իրաւունքէն :

Արդ երբ Պէկեան էֆէնտի քննադատու-  
թեան կը մտնէ, ոտանք ամբաստանութեան  
գոյն տալ կուզեն անոր, և ժողովն իբր այն՝  
կը հրաւիրէ զինքն ներումն խնդրել գունդակ  
նախ մէջ : Ազգային ժողովն հրաւիրած է նաև  
ՂՊէկեան էֆէնտի՝ Յանձնախումբին երթալ,  
բայց սա չէ գնացեր իրեն, վերադարձելով իւր  
խօսելու աղատութիւնն և ժողովս յ'ատենի-  
սատ լսել ուղեր է զինքն . . . :

ԶՊԱՆԵՍԱՆ Մ. ԷՑ. — (ընդմիջմամբ) Ազ-  
գային ժողովն երբէք ՂՊէկեան էֆէնտի լսել  
չէ ուղած, այլ միայն Ս. Պատրիարք Հայրն :  
Մինչև իսկ այն օրն Ատենապետն թողած է  
զիւր Աթոռ : Հարկ է ճշմարտութիւնն խօսիլ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՑ. — (չարունակելով)  
Ազգային ժողովն ուղեր է լսել ՂՊէկեան է-  
ֆէնտի քննադատութիւնքն, և լսեր է զոյն :  
Արդ կը հարցնեմ, հնա՞ր է արդեօք որ Ազ-  
գային ժողովն ամխատանողի դեր տոյ քն-  
նադատողի մը և առ այս՝ պատիժ մը տնօրի-  
նէ :

Իբր զխաւոր պապացոյ թէ՛ Պէկեան է-  
ֆէնտի զխտորութիւնք պարզապէս քննադա-  
տութիւնք էին և ոչ ամբաստանութիւնք, կը  
կը յիշեցնեմ քննիչ Յանձնախումբին համար  
գծուած պաշտօնին սահմանը, նոյն իսկ Ատե-  
նապետ Փաշայի բերնովն արտասանուած .  
« Յանձնադրողի պաշտօնն է երթալ Սրբադա-  
« նէն դործը հասնեալ և տեղեկագիր մը բե-  
« լել մեզ թէ՛ սոյն խնդրոյն վրայ քննադա-  
« տութիւն և հրատարակական վիճարանու-  
« թիւնք ընելու ժամանակն եկած է թէ ոչ,  
« և եթէ եկած է, ինչ կերպով զայն ընել

« անտառն իմ դատէ » : Նմանապէս Ազգային Ժողովն Ս. Պատրիարքի համարատուութեան վրայ Պէկեան էֆէնտիի զիտողութիւնքն լսելէ յետոյ, բանաձև մը բուժարկած է թէ՛ « Ազգային Ժողովս Պէկեան էֆ. ի այս օրուան « Ըրած քննադատութիւններն և Ս. Պատրիարք չոր տուած բացատրութիւնքն լսելէ յետոյ » նախաքննիչ Յանձնարարի տեղեկագրին եղբակցութիւնը կընդունի և Պէկեան էֆ. ի բննադատութիւններն անտեղի և առնչինչ կը համարի » : Այս ուրեմն կը հաստատուի թէ՛ ամբողջատուութիւն չ'կայ, այլ ընդ քննադատութիւն մը :

Մինչև հոս խնդիրն իւր օրինաւոր բնութայնք յառաջ գնացեր է, այսինքն Պէկեան էֆ. միշտ նկատուեր է իրբև բննադատող, ինչպէս որ էր իրօք, այլ սակայն յաճորդ նստին Երեւոյթանք մանք ընդդէմ՝ Պէկեան էֆ. ի բողոքագիր մը բերելով ուզեր են ամբաստանողի դեր ստը նմա : Ըստ խ՝ գործն այն է թէ՛ ոչ թէ Ժողովն զՊէկեան էֆ. պատժել ուզեր է Ս. Պատրիարքն յանիրաւի ամբաստանած լինելուն համար, այլ զՊէկեան էֆէնտի պատժելու համար զինքն ամբաստանող նկատեր է : Միթէ կարելի՞ է որ այդ տեսակ բողոքի մը վրայ Ժողովն այդ տեսակ վճիռ մ'արձակէ :

Երկրորդ, Պէկեան էֆէնտի ամբաստանող չէր, այլ քննադատ մը, զի եթէ ամբողջատուող լինէր, հարկ էր որ օրինաւոր ամբաստանագիր մը մատուցուեր Նիւսնին, որպէս կը տրամադրէ օրէնքն . . . . .

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — ( Առ. Ատենաբաճն ) կը յիշեցնեմ Ատենարան էֆէնտիին թէ այսօր խնդիրը Պէկեան էֆ. ի նկատմամբ տրուած օրոճան վերաքննութեան վրայ չէ, այլ պարպակէս Պէկեան էֆէնտիի այժմու ընտրութեան վուերացման վրայ է, ուստի պէտք չէ հեռանալ այս տեսակէտէն :

**ԳՈՐԻԳԻՆ Յ. ԷՖ.** — ( Շարունակելով )

Արդ մի անգամ բնեմք թէ՛ Պէկեան էֆէնտի ամբաստանող է՞ր թէ ոչ : — Սաճմանադրութիւն և ներքին Կանոնագիր կ'ըսեն թէ՛ Քերթ ամբաստանութիւն կայ Ս. Պատրիարքի դէմ, Պոլսոյ մէջ գտնուող երիցադոյն Եպիսկոպոսի, Նախագահութեամբ Ժողովն կը գումարի :

**ՉՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ.** — Ձեր յառաջ բերած մտատերն բոլորն ալ անհիմն են, Գործ գէն էֆէնտի, վասն զի այն ժամանակ բանութեամբ լսելուին զմեզ : Նորեկ Երեւոյթանք խնդրոյն յարակից պարագայից անտեղեկ են :

**ՄԷԼԻԳԵԱՆ Մ. ԷՖ.** — Բայց դուք ալ մըտիկ ըրէք :

**ՉՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ.** — Բունութեամբ և ճիշմամբ միայն :

**ՄԷԼԻԳԵԱՆ Մ. ԷՖ.** — Ուրեմն բանութեամբ ալ հրաժարեցուցեր են զՊէկեան էֆէնտի :

**ԳՈՐԻԳԻՆ Յ. ԷՖ.** — Կըսէի թէ՛ երբ ամբաստանութիւն կայ Ս. Պատրիարքի դէմ, երիցադոյն եկեղեցականի Նախագահութեան ներքև միայն Ժողովն կը գումարի և Ս. Պատրիարքն նոյն նստին՝ իրբև Նախագահ չ'կրնար բազմիլ հոն, այս բանս եղաւ . . . ոչ : Պատճառ. ուրովէտեւ Պէկեան էֆէնտի ամբաստանող չէր, և հետեւաբար Ս. Պատրիարքն ամբաստանեալ չէր :

**ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ.** — Բայց կը թուի թէ չէր ուզեր թախանջել օրինաց ոգւոյն :

**ԳՈՐԻԳԻՆ Յ. ԷՖ.** — ( շարունակելով ) Արդարև կան բաւեր զորս արասանենը ըստ ինքեան ամբաստանութիւն է, թէ և արտասանողն իրբև ամբաստանող չ'համարի զինքն : Այսպէս դառաճան բառ մը կայ զոր պահ մը

վերադրած են Պէկեան էֆ.ի, իբր թէ այդ բանն գործածեր է Ս. Պատրիարքի ղէմ: Թող թէ Պէկեան էֆէնտի յայտարարած է թէ այդպիսի բուս մը չէ արտասանած ընաւ, և ոչ թէ Զօղանեան էֆ.ի նման ընիր բանն արտասանելէ յետոյ ևս առած է զայն, այլ նոյն նստին իսկ յորում դարձեալ Եւսուֆեան էֆ.կ'առնեալեանէր, որպէս այսօր, ըսած է թէ՛ « Սրբազան, այդ տեսակ խօսք չէ ըսած » և արդեանայեւ չհրբած է զայն: Գարձեալ նոյն նստին մէջ Ս. Պատրիարքն իբրև Նախադաս բազմելէ զսա, նաև իբրև Առեկապետ վարած է զժողովն, զի Եւսուֆեան էֆէնտի լիւրձ է Գիւսնէն և թողած է Ս. Պատրիարքին առտենապետեալ: Է՛ր թոյլ տրուեցաւ: Ես պիտի եզրակացնեմ ուրեմն թէ՛ Ս. Պատրիարքն մի և նոյն նստին մէջ թէ՛ իբրև ամբաստանեալ, թէ՛ իբր դատասալ և թէ՛ իբր նախագահ չէր կարող բաղմիլ: Ուրեմն Պէկեան էֆ.ի խընդիլն այսօր համաձայն օրիաց՝ վերաբնեւելով, կը տեսնեմք թէ՛ իւր զիտողութիւնք բնաւ ամբաստանութիւնք չ'իւր, այլ պարզապէս քըննադատութիւնք:

**ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. —** Բայց այդ վերաբնեւութեան իրաւունքը դատին տիրւծը միայն կը սրտակնի, զոր ցարդ չէ խնդրած:

**ԳՈՐԳԳԷՆ Յ. ԷՖ. —** (Չարաւնակելով) Եւ թէ Ս. Պատրիարքը Հայոն ամբաստանեալ մ'էր, ինչպէս կրնոր իրեն ղէմ եղած ամբաստանութիւնը կարգացած ժողովոյն թէ՛ Նախագահն և թէ Առեկապետն միանգամայն լինիր Ուր տեսնուած է այս տեսակ դատախարութիւն մը:

Ուրեմն յառաջ բերած օրինական փաստերէս կը հետեւի թէ՛ Պէկեան էֆ. ամբաստանող չ'է եղած այլ քննադատ մը, և Աղ. գային ժողովն չունի պատիւ քննադատութեան ղէմ, հետեւաբար իւր քուէարկած քանաձեւն միայն օրինաւոր էր:

**ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. —** Բայց կարգացէ՛ք նաև 11 րո նստի ամենազրութիւնն:

**ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Գ. ԷՖ. —** Լուտարանուեցանք, բու է ալ:

**ԳՈՐԳԳԷՆ Յ. ԷՖ. —** Եզրակացնելով ուրեմն կըսեմ թէ՛ նախ Աղ. ժողովն ընաւ չունի ձեռնհասութիւն հրաժարեցնել երեսօխոսան մը բացի օրինաց արամադրած պարագայներէն, Էրկիորք, Պէկեան էֆ. քննադատող եղած է և ոչ թէ ամբաստանող, բայց ՚ի վերջոյ ամբաստանողի դեր տրուած է իրեն, այլ նախայն ամբաստանողի մը օրինական իրաւունքներն չեն տրուած իրեն:

Իսկ գալով Պէկեան էֆ.ի անձին, կը յայտարարեմ թէ՛ նա մի անտրժան Երեսօխոսան չէ, և այս մասին շատ բուն ըսել՝ կը վերապահեմ յարմար ժամանակին:

Ահաւաստի իմ առաջարկս զոր կը ներկայեմ Պատկ. ժողովոյդ հետեւեալ քանաձեւով:

(Զայտ ասելով Գորգէն էֆէնտի կ'ընթեռնու իւր հետեւեալ քանաձեւն:)

« Աղգային ժողովս, Պէկեան թաղէոս էֆէնտիի երեսօխոսանական ընտրութեան վերաբերեալ վարչական տեղեկագիրն ըստ օրինի նկատողութեան առած պահուն, Գաղաքական ժողովոյ յանձնարարութեան համմատ՝ ՚ի քնին առնելով նաև այն պատճական որոշումն որ տրուած է Աղգային ժողովոյ 1878 Գեկտեմբեր 29ի նստին մէջ ընդդէմ Պէկեան էֆէնտիի, և

«Նկատելով որ նոյն պատճական տնօրէնութիւնն արդիւնք եղած է լոկ թիւրիմացութեան, ըստ որում Պէկեան էֆէնտի՝ ոչ թէ ամբաստանող այլ պար-

զապէս քննադատող եղած էր Ամեն Ս. Պատրիարք Հօր ծանուցեալ համարատուութեան :

«Նկատելով միանգամայն որ, բայց ի օրինօք սահմանեալ մեկին և որոշ պարագայից, ո՛չ մի երեսփոխան կրնայ հըրաժարեցուցուիլ իւր պաշտօնէն, և ո՛չ մի ազգային անհատ որ ունի երեսփոխանական ամէն հանգամանք՝ կրնայ օրինաց վճռով անարժան հռչակուիլ երեսփոխանական պաշտօնի :

« Ազգային Ժողովս, Սահմանադրութեան նուիրական սկզբանցն հաւատարիմ և երեսփոխանական անբռնաբարելի իրաւանց նախանձախնդիր, իւր զերազոյն հեղինակութեամբն, այն է՝ Ազգային օրինաց զօրութեամբ, բեկանելով յիշեալ պատժական որոշումն իրբեւ ոչ օրինական՝ կը վաւերացնէ Սահմանադրութեան Նոր-Թաղի երեսփոխանական ընտրութիւնն : »

Յ. Գուրգին

ՁԱՏՆԵՐ — Քուէ՛, քուէ՛ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական զիտողութեան համար խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ՛ւ Ժողովոյս փական որոշեալ ժամն եկած հասած, սակայն Գիւտանս խօսք կուտայ Փառիաղեան էֆօի ըսկանանական զիտողութեան մը համար :

( Պահ մը խորին լուռիւն կը տիրէ )

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Գիտէք արդէն թէ ես հինգ վեց տարիէ ՚ի վեր համամիտ չեմ գլուտեալ Ս. Պատրիարք Հօր բռնած ընթացքին և միշտ քննադատած եմ Ն. Սրբաընտրութեան

զործերը : այս մասին իմ ունեցած համոզումներս անխախտ պահած եմ մինչև ց՛յտայ վայրկեան և սխաի պահեմ մինչև զերեզման :

ՁԱՏՆԵՐ — Այդ խօսքերը կանոնական զիտողութիւններ չեն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քիչ մը համբերութիւն ունեցիք : Այս խօսքերն ընելու հարկ կը տեսնեմ, վասն զի ուրիշ ըսելիք ունիմ : Բոցց այն խնդրոյն մէջ, զոր Պէկեան էֆէնտի քննադատած է, Ներսէս Պատրիարք արդար էր և է մինչև ց՛արդ, իսկ Պէկեան էֆէնտի անբարա էր և է մինչև ց՛արդ, այս իմ համոզումն էր և զոր տան կը յայտարարեմ այժմ իսկ և պիտի ստեղծ հետո մինչև զերեզման :

Գուրգէն էֆէնտի խնդրոյն պատմական տեսութիւնն ընելով ճշմարտութիւն մ՛երեւան հանեց, այն է թէ Ազգային Ժողովը զՊէկեան էֆէնտի քննադատ ճանչած է և անոր խօսքերը քննադատութիւն, զորս անտեղի գատելով մերժած է : Յետոյ Ազգային Ժողովն ամբարտաւանութեան զոյն տուած է Պէկեան էֆօի քննադատութեանց, և ըստ այնմ որոշած է որ Պէկեան էֆէնտի ըստ ներքին օրինաց՝ ներողութիւն խնդրէ Ս. Պատրիարքէն : Այս երկրորդ որոշումը նոյն ժամանակի պարագայից պահանջումն էր : Պէկեան էֆէնտի չուղեց այդ որոշումը գործադրել և հրաժարական զրկեց : Պէկեան էֆէնտի կրնար տաանց հրաժարելու չ՛գործադրել այդ որոշումը. բանցի ներքին Կանոնադրի զօրութեամբ, պատժական անօրինութեանց հետող երեսփոխանին անտըր լրագրայ մէջ սխաի հրատարակուէր : Այսօր իսկ եթէ ուրիշ երեսփոխան մը ամբարտաւանող լինի, կամ նկատուի և ներողութիւն խնդրեմ մասին Ժողովոյն որոշման չ՛համակերպի, առ առաւելն այդ հետող երեսփոխանին անտըր լրագրայ մէջ սխաի հրատարակուի : այս է ներքին Կանոնադրով հաստատուող պատժը : Այդ ըստ որում Պէկեան էֆէնտի կը հրաժարէր նոյն

պահուն, ժողովը նկատեց թէ, եթէ այդ հրա-  
 փորականն ընդունուէր, իւր որոշումն ան-  
 գործադրելի թողած կ'ըլլար. նոյնպէս պիտի  
 ըլլար, եթէ չորրորդ բացակայութեամբ հրա-  
 փորակաւ ընդունուէր. և ըստ որում ներքին  
 կանոնադիրը այս պարագան չէր նախատե-  
 սած . . .

**ԹԻՒՆՊԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ.** — Ուրեմն չ'նա-  
 խտտեսեալ պատիժ մը տնօրինուած է, ներ-  
 քին կանոնադրին չ'պարունակած մէկ պատիժը:

**ՓՈՒՍԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Այո, ներքին կա-  
 նոնադիրը չ'էր նախատեսած թէ՛ պատժական  
 տնօրէնութեան ներքեւ գտնուող Երեւոյի տան  
 մը երբ հրաժարի, ի՞նչ ընելու է: Այն ատեն  
 Ազգային Ժողովն նոր տնօրէնութիւն մ'ըրաւ,  
 այն է թէ, այդպիսի պարագայի մէջ գտնուող  
 երեսփոխանը ոչ թէ հրաժարեալ, այլ « իր-  
 բեւ անարժան երեսփոխանութեան հրաժարե-  
 ցուցեալ պիտի նկատուի: » Եւ այս տնօրէնու-  
 թիւնն ոչ միայն Պէհեան էֆէնտիի, այլ նոյն  
 Թուականէն յետոյ անշուշտ գործադրելի է ա-  
 մեն երեսփոխանի համար, ըլլայ Թորոսեան,  
 Մարկոսեան . . . . .

**ԶԱՅՆԵՐ** — Ուրիշ անուն չ'գտա՞ք:

**ՓՈՒՍԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Փափայցեան և այլ  
 ո՛ր երեսփոխան ըլլայ, ամենուն համար գոր-  
 ժադրելի է այդ պատժական տնօրէնութիւնը:  
 Ուրեմն Պէհեան էֆէնտի ժողովին որոշումը  
 չ'գործադրելուն համար նոյն ատեն կրած է  
 իւր պատիժը, հետեւաբար փակեալ է այդ  
 խնդիրը: Այժմ այդ անցեալ եղելութիւնն փակ-  
 եալ նկատելով, կրնանք վաւերացնել Պէհեան  
 էֆէնտիի երեսփոխանական ընտրութիւնը:

**ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Սոյն խնդրոյ վրայ  
 տակաւին մի քանի երեսփոխանք խօսք ուղած

և իրենց անունն արձանագրել տուած են,  
 այլ ըստ որում ժողովոյ փակման ժամն ան-  
 ցած է, ուստի վիճարանութեան շարունակու-  
 թիւնն կը մնայ յաջորդ նստին:

\* \* \*

Նստի փակման պահուն, Դիւանն կ'առա-  
 ջարկէ յաջորդ նիստն զուամբել երեք շաբա-  
 թէն, յայտնելով թէ հաւանականութիւն կայ  
 որ նոյն միջոցին Երուսաղիմայ պարտուց իրն-  
 դիրն ներկայանայ Ժողովին, և այլը կ'առա-  
 ջարկեն մէկ ամսն գումարի: Սակայն երես-  
 փոխանաց ոմանց կողմանէ անգի ունեցած  
 դիտողութեանց վրայ, Դիւանի այն աստջար-  
 կըն բռէի կը դրուի, որ կը մերժուի 9 ի դէմ  
 11 քուէով:

Հետեւաբար կ'որոշուի յաջորդ նիստն  
 ըստ օրինի 15 օրէն գումարել:

**Գ. Բացակայութիւն**

Ատենապետ էֆէնտի ժողովին կը հազոր-  
 դէ այն նստէն երրորդ բացակայութիւն ունե-  
 ցող հետեւեալ երեսփոխանաց անուանքն՝

- Գեոր. Տ. Մատթէոս Եպիս. Երվրեան
- Արժ. Տ. Գարեգին Վրդ. Թաթարեան
- Մեծ. Տրդատ էֆէնտի Փանդաեան

և կը յորէ թէ՛ յառաջիկայ նստին համար ըստ  
 օրինի կոչնադիր պիտի յղուի ոմանց, ինչպէս  
 նաեւ այն երեսփոխանաց՝ որք անցեալ նիստէն  
 երրորդ բացակայութիւն ունեցած իննելով, չ'են  
 ստորագրած իրենց յղեալ կոչնադրերն:

Ատենան կը վերնայ 'ի ժամ' 6 1/2:

- Բ. Աւենադպիր Ատենապետ
- Յ. ՊՕՇՆԱԿԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՆԵԱՆ

# Ն Ի Ս Տ Ժ Բ.

12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԿԵՂԵՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ  
ՆՆԵՆՆՆՆՆՆՆՆՆՆ

### Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բաղրատոճևի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Սէթեան

### Բ. Վիճակ

- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 6 Մատթէոս Եպս. Իգմիրեան Բ 3
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ Պ

### Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափազեան
- 10 Խորէն Քահ. Փէշիկեանեան Բ 2
- 11 Ոսկի Քահ. Օհանեան
- 12

### Դ. Վիճակ

- 13 Եղիշէ » Այվազեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան
- 16

### Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվազեան
- 18 Գարեգին » Թաթարեան Բ 3
- 19 Սուքիաս Քահ. Ստեփանեան
- 20 Գարրիէլ » Խահճեան

- Բ Բաղակայութիւն առաջին :
- Պ » երկրորդ :
- 2 » բանաւոր պատճառաւ :

ՆՆԵՐՆՆՆՆՆՆ  
Ա. Վիճակ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ԿԵՍԻԿ-ՎԱՂԱ-  
ԵՒ ԳՈՒՄ-ԳԱՐՈՒԻ ՂՈՒՐՍ

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ Պ
- 22 Կարապետ Աղարդմանեան Բ Պ
- 23 Բարթող Գիւրքճիպաշեան Բ 2
- 24 Յ. Մէրեմ-Գուշի
- 25 Տիգրան Հիւնքեարպէյէնտ Բ Պ
- 26 Աւետիս Սուրենեան
- 27 Տօբթ. Այվազեան
- 28 Գէորդ Այվազեան Բ Պ
- 29 Յակոբ Եմէնիճեան Բ
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կանաքակեան Բ
- 32 Միհրան Ինճեան Բ 12
- 33 Մարտիրոս Էքսէրճեան
- 34 Մանուէլ Պէշիբեան Բ Պ
- 35
- 36
- 37

### Բ. Վիճակ

- 38 Բարսեղ Հալանեան
- 39 Յովհաննէս Քէրէստէճեան
- 40 ՄԷԼՔՈՆ Պարոնիկեան
- ԵԵԿԻ-ԳԱՐՈՒ
- 41 Լեւոն Գարամանեան Բ Պ
- 42 Մարուգէ Յրէնիեան
- 43 Պողոս Էնքսէրճեան Բ
- 44 Յակոբ Պօշակեան

ԽԱԿԻԱՍՏԱՐ Ս. ԽԱՂ

- 45 Սիմէօն Յէլէկեան
- 46 Գարրիէլ Նորատուրեկեան

47 Գասպար Գասպարեան  
48

ԽԱԿԻԱՍՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

- 49 Միհրան Պահճէգախուր Բ Պ
- 50 Պօղոս Թորգոմեան Բ
- 51 Տրդատ Փափազեան Բ 3
- 52 Յակոբ Հանեան Բ 2
- Գ. Վիճակ
- ԳԱՍՏՐՈՒ-ԲԱՂԱ
- 53 Գասպար Չերազ Բ 2
- ԲԵՐԱ
- 54 Գրիգոր Սէլիմյէճեան
- 55 Ղազար Հոփուեան
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պօյաճեան
- 58 Վիչէն Օրմանեան Բ
- 59 Սիւնքերիմ Մանուկեան Բ 4
- 60 Համարձուժ Մաղպուրե.
- 61 Մանուկ Աղանեան
- 62

### ՄԻՉԱԳԻՂ

- 63 Տիգրան Եուսուֆեան
- 64 Մկրտիչ Գաղանճեան
- 65 Մկրտիչ Շանրմեան
- 66 Սահակեան Տանասեան
- 67

ՊԵՂՉՈՂ ԵՒ ՂԱՅԱՔԻՊ

- 68 Միքայէլ Մամիկոնեան Բ
- Գ. Վիճակ
- ԳՈՒԿԿԱՆՈՒՊ ԵՒ ԻՃԱՍԽԻ
- 69 Մկրտիչ Մէլգյուրեան Բ
- 70 Միսոն Մարտոսեան Բ 2

Գատըզիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Գառնիկ Յովակիմեան Բ Պ		421 Ստեփան ֆափազեան
72 Կարապետ Հազարեան Բ	Կարին	Տիվրիկ
Նարբե-Գաբու	401 Սերոբէ Աղնաւորեան Բ	422 Նշան Գարաղաշ Բ 2
73 Մինրան Տէօբմէճեան	402 Աւետիս Թընկերեան	Զէյրուհ Եւ Մարաշ
Եհնի-Մանայիկ Սամարիոյ	Աղլիանուպօլիս	423
74	403 Յակոբ Պարոնեան Բ Պ	Տրապիզօն
Թօփ-Գափու	Նիկումիլիս	424 Պաղտատ
75	404 Կարապետ Ս.Իւթիւճեան Բ 2	425 Կարապետ Սէթեան
Էլուպ Ս. Եղիս Եւ Ս.	Ակն	Տիգրանկէրտ
Աստուածածին	405 Յակոբ Գորեան Բ	426 Մինրան Զօպանեան 3
76	Ղարանիսար	Վան
Գուրու-Զեղմէ	406 Կարապետ Երէցեան Բ Պ	427 Մարկոս Աղաբէգեանց Բ Պ
77 Կարապետ Սըվաճեան	Արաբկիր	Աղրամար
Հիսար Եւ Պոյաճի-Գիւղ	407 Կարապետ Խաչիկեան Բ	428
78	Բաղէշ	Հայկայ Եւ Այնքապ
Նոր-Գիւղ Եւ Սբէնիս	408 Արիւար Արիւարեան	429
79	Պրուսա	Սեբաստիա
Պալատ	409 Քրիստոստուր Ղազարոսեան	430 Մկրտիչ Յ. Մէլիքեան
80 Մկրտիչ Կիւմրուչեան Բ 4	Եւդոկիս	Ռուսնոպ
81 Ռեթէոս Թաղէոսեան	440 Կարապետ Կիւրճեան Բ Պ	Բաբերդ
82 Ներսէս Երէցեան Բ	Ամասիա	432
Քարակեօմիսկ	441 Համբարձում Ալաճաճեան	Զմիկածագ
83 Յովաննէս Թորոսեան	Բայու	433 Գաղատիս
84 Կարապետ Փանոսեան	442 Յովաննէս Աղնաւորեան Բ 2	434 Ատանա
Ե. Վիճակ	Եղեսիս	435 Մինաս Զերազ
Սամարիս	443 Յակոբ Իւթիւճեան	Սղերդ
85 Յակոբ Արշակ	Մանճըլլիս	436 Մատթէոս Ալէքսանեան
86 Սարգիս Աղաբէգեան Բ Պ	444	Եօզատ
87 Յովաննէս Նուրեան Բ 3	Համըն	437
88 Ռուբէն Կիւմրուչիկերտան Բ 2	445	Մայրիս
89	Երզնկա	438 Գէորգ Վարդանեան
90	446 Ռեթէոս Պէրպէրեան Բ 2	Իզմիր
91	Թէքիրտաղ	439
92	447 Տիգրան Գ. Սինանեան Բ 2	Եգիպտոս
93	Կեսարիս	440 Աբրահամ Մուրատեան
94	448	
Խասգիւղ	449	
95 Յովաննէս Արշակունի	Պալքքեօք	
96 Ռուբէն Պուլիուրեան	420 Ստեփան Գօլթեան	
97 Յակոբ Խանտանեան Բ Պ		
98 Նիկողոս Թիւլպէնտճեան		
99 Նշան ֆափազեան		
400		



## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԱՆԿՍՄԲ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւադէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Մէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Իզմիրեան	
4.	»	Գարեգին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւադէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փարսաղեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մկրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուրիաս	»	Ստեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

### ԱՆԿՍՄԲ ԲԱՂԱԲՅԱՆ ԺՈՂՈՎՈՑ

1.	Աննաորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվաղեան	Տօք. Նշան	»	Բ. Արեւադէր
3.	Գրլըճճըեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւադէր
5.	Խըտրեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հազարեան	Կարապետ	»	
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Արեւադէր
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարսանեան	Գէորգ	»	
13.	Փէշլումյանեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Քիւրքճիլանյան	Կարապետ	»	

# ՊԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օ Ր Ա. Կ Ա. Ր Գ.

- Ա. — Ատենական զործողութիւնք .
1. — Բացակայութիւնք
  2. — Վաւերացումն 1882 նոտարջանի ԻԱ. և Լ. ներկայ շրջանի Ժ. ԺԱ. նիստերու անենագրութեանց :
  3. — Բացատրութիւն 'ի Մայր-Գիււանի ժողովոյ նիստն մէկ շարաթյեռանագրած շինելուն անթիւ :
  4. — Տեղեկագիր Քաղ. ժողովոյ 'ի պատասխանի երեք երկնիտանաց հարցման յազարս Պէշեան Ավրայի կտակի բռնաբարման :
  5. — Ծանօթագիր կրօն. ժողովոյ Հաճընոյ մէջ տեղի ունեցած բռնի ամուսնութեան մ'անթիւ 'ի պատասխանի կարապետ էֆէնտի Արվաճեանի հարցման :
  6. — Հարցագիր Երեսփոխանաց ուղղեալ առ Ազգ. Վարչութեան
- Բ. — Ինչիր Երեսփոխանութեան Բատէոս էֆէնտի Պէշեանի , ( Շարունակութիւն վիճարանութեան : )

Գ. — Բացակայք .